

# ՏԱՅ ՍԿԱՆՈՒՏ

## ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Այսօր ամբողջ Հայութիւնը կը սօնէ իր հակասագրին ապահովումը  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԱԻԵՐԱՑՈՒՄՈՎ**

Ան արիւնի ու բռնութեան մէջէն վե՛ր կը բարձրացնէ իր

**ՅԱՂԹԱՊԱՆԾ ԴՐՕԾԸ**

եւ կը գոչէ

**ԿԵՑՑԷ՛ ՆՈՐԱԾԻՆ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

Հ. Մ. Ը. Մ. ը այս առիթով կը շնորհաւորէ միեւնոյն ատեն իր մասնա-  
ճիւղերուն և ամբողջ Հայութեան, Անկախ Հայաստանի իրական ՆՈՐ ՏԱՐԻՆ :




Պ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊՅԵ



Պ. Ա. Ա. ՀԱՅՐՈՆԵԱՆ





Ահա կուգանք Քեզ ո՛վ մեր ԿԱՐԵՎԷՐ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ. ահա կուգանք մենք՝ ձեր-  
բազատուած որդիներդ, առոյգ եւ կայտառ. ողջոյն Քեզ:

—Կուգանք Քեզ, ազատ եւ կաշմբուռն բազուկներով ցանկ հիւսելու Քու շուրջդ: Մեկ  
բազուկները Քեզ պաշտպան, ՏԱՌԱՊԱՆՄ ՄԱՅՐ ԵՐԿԻՐ . . . :

—Կուգանք Մենք, հարթելով բռնութեան խութերն ու խոչընդոտները մեր կրունկներուն  
տակ: Մեր կամքը Քեզ ապաւէն, ԱՐԻԻՆԱԹԱԹԱԽ ՀԱՅ ԵՐԿԻՐ . . . :

—Կուգանք շէնցնելու, մեր յաղթականի կայթերով, աւերակ զիւղերդ եւ բաղաբներդ:  
Մեր երգերը Քեզ ոգևորութիւն, բռնութեան տակ ԸՆԿՃՈՒՍԾ ՀԱՅՐԵՆԻՔ:

. . . Մեր բազուկներով յուռթիացնելու խոպան դաշտերդ, դալարացնելու արօտներդ  
եւ ուռնացնելու Սօսեաց անտառներդ, մեր բրտինքով արքասաւորելու Քու բերմաւոր հողերդ  
կուգանք Քեզ, խորթ ծնոք՝ որու մէջ ԱՄԼԱՅԱԾ ԵՐԿԻՐ ԴՐՈՒՍԱԲԱՅ:

—Կուգանք Քեզ մեր փարելի երկիր, ազատութեան դրօշը բարձր բռնած, առոյգ եւ  
կայտառ, զուարթ եւ ոգևոր, աշխատանքի երգը շրթներուս վրայ, արգասաւորիչ բրտինքը  
ճակատնիս, կուգանք Քեզի տալու կորով եւ վստահութիւն, ԿԱՐՕՏԱԿԷՉ ՀԱՅՐԵՆԻՔ:

—Կուգանք, Քու սէզ գլխուդ, ալեւոր Մասիսին, կանանչ պսակ հիւսելու, կուգանք Ա-  
ւարայրդ մեր յաղթականի թոփիւններով թնդացնելու. . . ՈՂՋՈՅՆ Քեզ յոյսերով լեցուն Մեր  
ՆՈՐԱԶՄՏ ՀԱՅԱՍՏԱՆ:


**ՀԱՅ ՊԱՏԱՆԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ**  
(Հայ Սկաուտներ եւ Հայ Մարզիկներ)



ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐ, բնութեան ծոցի մէջ ՕՐ ՀՆՆԵՐԳԻ ՊԱՀՈՒՆ




# Օ Կ Ա Ո Ւ Տ Ի Կ Ե Ա Ն Ք



## ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

### ՀՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՅՄԷՉ



Զարմանալի ժողովորդ ենք իւկապէս, նշ նոր և օգտակար բան որ հրապարակ նետուի, ան կրջապէս կը հինցնենք զայն, կերպով մը փաստելով թէ մենք՝ Հայերս տարիներ, դարեր առաջ ծանօթ եղած ենք ատոր և ահա առիկ կը խառնենք, կը փնտակենք մատենադարանները, փոշոտ գիրքերը, հին թերթերը և վերջապէս կը յաջողինք ելեւան բերել ... արձանագրութիւն մը, յիշատակութիւն մը՝ որ մօտէն կամ հեռուէն շօշափէ, նորութիւն կարծուած այդ բանն՝ ինչ որ է:

Ներկայիս ալ, երբ Սկսուտութիւնը կուգայ ամենէն աւելի հետաքրքիր ու կենսունակ ալիքը կազմել Հայ Կեանքին, կ'ազանք ահաւասիկ յայտարարելու թէ անիկա 17րդ դարէն ի վեր այսինքն՝ Պատըն Բաուէլէն երկու հարիւր տարիներ առաջ գոյութիւն ունեցած է Հայ Կեանքին մէջ: Արդարև, Էջմիածնայ «Արարատ» թերթի հին թիւերէն մէկուն մէջ կը հանդիպինք կանոնադրութեան մը, որ 1680ական թուականներէն սկսելով մինչև 19րդ դարու սկիզբները յաջորդաբար վաւերացուած է Էջմիածնայ Ելիազար, Աղէքսանդր և Արղութեանց Յովսէփ կաթողիկոսներէն, ամենէն վերջը Պեսարապիոյ Գրիգոր Արքեպիսկոպոսէն:

Կանոնադրութիւնը կը վերաբերի Մոլտաւիոյ Պոթուշան և ուրիշ քաղաքներու հայ պատանիներու կազմակերպութեան (Պրաստաւա), որուն անդամները կտրիմ քսոտով կ'որակուէին:

Այդ կազմակերպութիւնը նպատակ ունէր այդ քաղաքներու պատանեկութեան հոգեկան ու մարմնական ազնուացումը:

Յիշեալ կանոնադրութեան համաձայն իւրաքանչիւր պատանի որ կը թեւակոխէր 12 տարին — այսօրուան սկսուածներու նուազագոյն տարիքը — պարտաւոր էր արձանագրուիլ իբրև նախընտաց պրաստաւային և հաղորդուելու երդուելէ ետք, պատկանիլ այդ կազմակերպութեան կտրիմ անունով, մինչև ամուսնութիւնը:

Կտրիմները իրենց թիւին համեմատ կ'ու-

նենային խէրօպետ մը կամ խէրապետներ, որոնք կ'ընտրուէին պատանիներու ժողովին կողմէ և կը վաւերացուէին քաղաքին մեծերէն:

Կտրիմներու պարտականութիւններն էին.  
— Ամեն օր և մա'նաւանդ ամեն կիրակի օր անպայման կերպով ելեղեցի երթալ ու ներկայ լլլալ Ս Պատարագի արարողութեան:

— Համայնքին ուէ մէկ անհատին, (հարուստ թէ աղքատ) պսակի, յուզարկաւորութեան և թաղման արարողութիւններուն ներկայ գտնուիլ անպատճառ և մասնակցիլ երգեցողութեանց:

— Տօնական օրերուն շնորհա որութեան համար իրենց խէրապետին տունը երթալ ուրիչ, անոր առաջևորդութեամբ պարտաւոր էին բոլոր հայ քաղաքացիներուն տունները այցելել և շնորհա սրել զիրենք:

— Ամեն շաբաթ օրերը, պատանիները կամ կտրիմները պարտաւոր էին մեռնող կտրիմներու հոգուն համար պաշտօն կատարել տալ:

— Կտրիմներէն պահանջուած ամենակարեւոր յատկութիւններն էին, կարգապահութիւն և բացարձակ հնազանդութիւն՝ իրենց խմբապետին, որուն պարտքն էր գործադրել տալ վերոյիշեալ կանոնները իրենց ախտոջ խասութեամբը և հակել կտրիմներու բարոյական ու մարմնական վիճակին:

— Այս կանոնադրութեան ուէ մէկ մասին հանդէպ տեղի ունեցած թերացումը կը պատժուէր զրաւական տուգանքով, որ թերացողին յանցանքին կամ աստիճանին համեմատ կը փոխւէր. թերացողը եթէ խմբապետը ըլլար, այդ պատիժը ալ աւելի կը սաստիանար:

Խէրապետները (վասան), ախտոջ քաղաքին և կտրիմներուն վատահոթիւնը զրաւող արդարակորով երիտասարդներ էին, և իբր այդ իրենց պարտք կ'իյնար, վարուիլ կտրիմներուն հետ չափազանց անկողմնակալ և արդարադատօրէն:

— Խմբապետը երբ գինով կամ սրտնեղած վիճակի մը մէջ գտնուէր, այդ վայրկեանին ոչ մէկ դատաւարութիւն պէտք է ընէր, քանի որ այդ վիճակին մէջ, պահանջուած ողջմտութիւնը չ'պիտի ունենար արդար որոշում մը տալու համար: Բոլորովին սթափելէ վերջն ալ



երբ կը դատէր կտրիճը անոր գործած մէկ  
յանցանքին համար, այդ մասին իր տուած ո-  
րոշումին բացարձակապէս չ'էին կրնար միջա-  
մրտել կտրիճին ծնողքը կամ բարեկամները,  
և կտրիճն ալ չէր կրնար բողոքել կարգադրու-  
թեան դէմ, հակառակ պարագային թէ՛ ինքը  
և թէ՛ ծնողքը դրամական տուգանք մը կը վը-  
ճարէին, առանց դարձեալ որոշումը կարենալ  
փոխելու:

— Խմբապետը պարտաւոր էր նոյնպէս իր  
խումբի նիւթապէս զօրանալուն համար, ամեն  
առիթ օգտագործել և գիտնալ, մանաւանդ  
ճնշեսնէլ (ինչ որ ներկայ սկաուտական դաւա-  
նանքին մաս կը կազմէ) և իր գործունէութեան  
ալ տեղեկատուութիւնը պէտք էր ընէր տարե-  
գլխուն՝ զինքը ընտրողներուն առջև:

— Բոլոր կտրիճները պարտաւոր էին հսկել  
նոյնպէս իրարու վրայ փոխադարձաբար, և ի-  
րենցմէ մէկուն անպատշաճ մէկ ընթացքը տես-  
նելու պարագային զգացնել իրեն այդ:

— Խմբապետը միշտ պէտք էր առիթներ  
ստեղծէր, որպէսզի որքան կարելի է, յաճա-  
խակի կերպով կտրիճները կարենան մէկտեղ  
հաւաքուիլ և իրարու հետ շփման մէջ ըլլալ:  
Իսկ իր հրաւերին չպատասխանելու յանցանքը  
գործող կտրիճը կը յանդիմանուէր և դրամա-  
կան տուգանքի կը դատապարտուէր:

Ահաւասիկ համառօտ պարունակութիւնը  
կանոնաւորութեան որուն ամբողջ հրատարա-  
կութեանը թոյլատու չ'ըլլար թերթիս ծաւալը:

Բայց այսքանն իսկ կը ցուցնէ թէ Մոլ-  
դաւիոյ Հայերը որքան նախանձախնդիր եղած  
են իրենց զաւակներուն կրթութեան:

Ինչպէս կը տեսնուի, այդ կազմակերպու-  
թիւնը չափազանց նմանութիւն ունի մեր ներ-  
կայի սկաուտականին հետ, իրենց ընտրած կր-  
տիճ բառը, որ շատ աւելի յարմար է ըստիս,  
քան թէ Հայ-Արին: Խմբական կազմակերպու-  
թիւնը, ընդունելութեան պայմանները, բարո-  
յական պարտադրութիւնները, բոլորը, չափա-  
զանց կը մօտենան դարձեալ կ'ըսեմ, սկաու-

տական կազմակերպութեան՝ որուն յարգելի  
հիմնադիրը, մեծանուն Անգլիացին, պատանե-  
կան աշխարհի 19րդ դարու մարգարէն, զօրա-  
վար Պատէն Բաուըրն անգամ, իբրև ճշմարիտ  
և մեծագոյն սկաուտը, պիտի ուզէ խոստովանիլ  
թէ սկաուտական պաշտելի՛ այդ կազմակերպու-  
թեան առաջին սերմնացանները եղած են Հայեր:

Թէ՛ ո՛ւսկից ծագում առած է այդ կանո-  
նադրութիւնը, այդ մասին ո և է հետք չկայ:  
Թերեւս Մոլդաւիոյ Հայերը եկած ըլլալով զա-  
նազան կողմերէ, իրենց հետ եկած են նաև այդ  
կանոնադրութիւնը: Ըստ իս աւելի ճիշդ պիտի  
ըլլար ըսել թէ՛ գաղթականութիւնը ինք ստեղ-  
ծած է այդ կանոնադրութիւնը, որպէս զի ի-  
րենց զաւակները մնան իրենց շրջանակին մէջ,  
կրթուին իրենց ոգիով և առիթ չ'ունենալով  
չփման մէջ մտնելու տեղական օտար շրջանակ-  
ներու հետ չ'այլասերին: Եւ որպէս զի աւելի  
ազդու ըլլայ, վաւերացնել տուած են զայն  
այն ատենուայ աղգային թէ կրօնական ամենա-  
բարձր անձնաւորութենէն՝ կաթողիկոսէն:

Կտրիճներու և սկաուտներու տարբերութիւնը  
կը կայանայ իրենց 200 տարի առաջ կամ ետք  
ըլլալուն մէջ: Առաջինները, զաւակներ՝ ոչ ան-  
կախ և կրօնական ոգիով սնած համայնքի մը,  
իրենց կարգախօսը կ'ընտրեն աւելի, կրօնքին  
բանաձեւած սկզբունքներուն մէջէն, իսկ վեր-  
ջինները (20) տարի ետք, նոյն սկզբունքները  
աւելի արդիական կերպով բանաձեւելով է որ  
կը կազմեն իրենց զաւանանքը:

«Կտրիճները» չ'ըլլալով զինուորական ազգի  
մը զաւակներ, հասարակական կեանքին կը  
զինուորագրուին, մաս առնելով անոր ամէն  
ձեւերուն մէջ, իսկ սկաուտութիւնը, ծնունդ՝  
երկար պատերազմէ մը ելնող մե՛ծ պետութեան  
մը, իր զաւակները կը պատրաստէ՛ զօրաւոր  
բարոյականի տէր բանակի մը զինուորագրու-  
թեան:

Երկուքն ալ կը ձգտին սակայն միեւնոյն  
նպատակին. — Նոր սերնդի փրկութիւն և ազ-  
նուագում:

Հայ Կղզի

ՏԻԳՐԱՆ ԽՈՅԵԱՆ








25 Յուլիար Քերայի սկսուածները, Երրորդութեան եկեղեցիին մէջ Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ երգման արարողութենէ վերջ նկարուած:

### ՔՈՆԱԿՈՎ ՓՈՔՐ — ՈՐԱԿՈՎ ԳՐԱՆՍԻՐ



Բաղդորոշ օրեր կ'անցընենք:

Առնուած տեղեկութեանց նայելով՝ Սաղաղութեան Համաժողովը քանի մը շարաթէն պիտի վճռէ Թուրքիոյ ճակատագիրը, և ապահովարար, անոր հետ մէկտեղ պիտի գծուին նոր Հայաստանի սահմանները:

Պատրաստուինք: Անգամ մը որ մեր հայրենի երկիրը երթանք ու հոն տեղաւորուինք, առջին հարցը զոր մեր առջև պիտի գտնենք և որ մեզի լրջօրէն պիտի զբաղեցնէ, մեր ազգին թւոյն նուազութիւնը պիտի լլայ: Քիչեր ենք: Մեր երկրին — մեր երկիրն որքան ալ փոքր ըլլայ ան որտա՞րածու թիւը — համապատասխան թիւ մը չ'ունինք: Մարդակերպ գաղաններ անճիտեցին մեզի: Պէ՛տք է անպայման և շուտով ամփնք. բազմանանք ու պահանջուած թիւը ունենանք: Անհրաժեշտ է ասիկա: Բայց եթէ արգելքներով կամ պատճառանքներով չ'արեանանք ասիկա ընել շուտով, գոնէ այդ պակասը լրացնենք՝ մեր ազգին որակը ա՛յլ աւելի ազնուացնելով:

Եւ անյապաղ պէտք է ընենք ասիկա: Պէ՛տք է ընենք, ո՛չ թէ անոր համար միայն որ անիկա մեր ձեռքն է, մեր կամքէն կախում

ունի, այլ և անոր համար ինչ անիկա աւելի լաւ է, աւելի նախամեծար է: Կո՛ղ չէ թէ ըլլանք քանակով փոքր և սակայն՝ անպայման ըլլանք որակով ընտիր:

Ա՛յո, Աւելի լաւ է որ մեր ազգը՝ 400 միլիոն թիւով ծիրած, ինկած մեծ Չինաստան մը ըլլալու տեղ, 50 միլիոն թիւով կայտառ ու կորովի, համեմատարար փոքր ծաբօն մը ըլլայ, Աւելի լաւ է որ Հայաստան՝ 15 միլիոն բնակիչով բնակիչով խոտվայոյշ և յետամնայ սպանիա մը ըլլալու տեղ, 4 միլիոն բնակիչով բարեկեցիկ ու բարգաւաճ Զուիցերիա մը ըլլայ:

Ա՛յո՛, անպայման և անյապաղ պէտք է ա՛յլ աւելի ազնուացնենք մեր ցեղին որակը և հասցնենք ա՛յն աստիճանին, ուր կը գտնուին աշխարհը վարող ազգերը: Եւ ասիկա պիտի ընենք, և շուտով ու զիրաւ պիտի կրնանք ընել՝ շնորհիւ Հայ Սկաուտին:

Վստահ ըլլա՛նք անոր:

Հայ Սկաուտը պիտի ազնուացնէ մեր ցեղին որակը՝ ո՛չ թէ անով որ մեր երիտասարդները Ֆիզիքսպէս պիտի ուժովցնէ, այլ անո՛վ որ այդ ուժին հետ շատ մը բարեմասնութիւններով պիտի օժտէ զանոնք՝ ո՛չ թէ անով որ՝ Հայ Սկաուտը մարզանքներու ճաշակը պիտի տայ մեր երիտասարդներուն, այլ անո՛վ որ այդ



մարզանքները պիտի կրթեն զանոնք, անոնց նկարագրերը պիտի շինեն:

Հայ պատանին՝ Սկաուտ խումբին մէջ մըտ նեղով, անոր պատուէրներուն՝ անսպով, անոր օրէնքներուն հպատակելով, պիտի ըլլայ շարքայ և ժուժկայ, ինքնավստահ և ձեռներէց, գործունեայ և պատուախնդիր, մարդասէր ու անձնուէր: Հայ պատանին՝ Սկաուտի կեանքը սպրելով, պիտի սորվի տիտիքին, առանց որուն հնար չէ բարեկարգ ընկերութեան մը բոպէ մը իսկ կանգուն մնալ, պիտի սորվի ընկերութիւն և համերաշխութիւն, որոնց աւա՛ղ, այնքան շատ պէտք ունինք այս պահուս, պիտի սորվի գիտակից հնազանդութիւն իր պիտին և, ասով, յարգալից վերաբերում հանդէպ ու է իշխանութեան. երբ կը տեսնէ թէ իրմէ կարողը, իրմէ արժանաւորը կը ներկայացնէ այդ իշխանութիւնը:

Ահա ա՛յսպէս, Հայ Սկաուտը ա՛յլ աւելի պիտի ազնուացնէ մեր ցեղին որակը, ա՛յլ աւելի պիտի բարձրացնէ մեր ազգը և ասով պիտի դարձանէ այն պակասութիւնը զոր ունինք թիւով քիչը որ ըլլալնուս պատճառով: Բայց ասոր համար էական պայման է որ Սկաուտիգ մը աւելի տարածուի մեր մէջ, ծաւալի ամէն տեղ:

Մենք պիտի փափաքէինք որ՝ անխտիր ամէն հայ պատանի, տակաւին իր դպրոցին չըրջանը չ՛աւարտած, տակաւին իր ոտքը գործի աշխարհի սեմին վրայ չը դրած, ըլլայ Սկաուտ, մտնէ Սկաուտի խումբին մէջ. անցնի Սկաուտի բովէն, և հոն զատուելէ ու շտուելէ, մարգուելէ ու կրթուելէ ետքը սկսի կենաքի պայ-

քարին, որպէս զի թէ միշտ յաղթական դուրս ելլէ այս պայքարէն և թէ ասով պատիւը աւելցնէ իր ցեղին:

Եւ կը յուսանք թէ ասիւա պիտի ըլլայ: Որովհետև մենք Հայերս, որ մեր ազգային ամենէն կենսական խնդիրներուն մէջ անգամ, ամենէն վճռական բոպէներու մէջ իսկ, շատ դիւրաւ չենք համաձայնիր, տարակարծիք մասերու կը բաժուինք, ուրախալի է որ Հայ Սկաուտի հանդէպ, ամէնքնիս՝ միասիրտ ու միտքան անվերապահ համակրութիւն մը յայտնեցինք. ամէն սեղի ու իւրի Հայ Սկաուտի խումբերը սրտանց սիրեցինք և Հայ Սկաուտի հիմնադիրներուն հանդէպ իրենց արժանի խոր յարգանքը ունեցանք:


Մնայ որ, այդ սէրն ու յարգանքը պարտք մը կը դնես, պատասխանատուութիւն մը կը հրաւիրեն մեր Սկաուտներուն և անոնց պետերուն վրայ: Ազգը օգտակար գործեր կը սպասէ իրենցմէ, մեծ յոյսեր դրած է իրենց վրայ, որ մենք վստահ և ապահով ենք թէ՛ հայ երիտասարդները, հայ պատանիները յարատեւ աշխատութեամբ ու բարի, պատուաբեր վարքով և անոնց պետերը իմաստուն վարչութեամբ և իրենց հիմնուած գործին պահանջած բարձրութեանը վրայ մնալով պիտի արդարացնեն ազգին իրենց հանդէպ տածած յարգալից համակրանքը, պիտի իրագործեն իրենց վրայ դրուած յոյսերը, և ասով իրաւունք պիտի տան Հայ Ազգին հպարտութեամբ բսելու. — Արդարեւ, Փոֆր եւնի ֆակտիով, բայց ընտիր եւնի որակով:

**ԱՐՏԱՇԷՍ ԳԱԼՓԱՔՃՅԱՆ**





### Հ Ա Յ Ա Ր Ի Ն



Հայ Արի եմ Հայ Արի,  
 Զուարթ աժխոյժ ու բարի  
 Փոքրիկ մի հեզ պոսանի,  
 Կ'ուզեմ ըլլալ պիսանի:  
 Հայ Արի եմ հայ Արի,  
 Նպասակս է յոյժ բարի:

Ես չ'եմ բաղձար պերճանք սին,  
 Թող բեռցնեն իմ ուսին  
 Ընկերներու բռններ ի,  
 Այդ ինձ է միտ հանելի:

Հայ Արի եմ հայ Արի,  
 Ամենին եմ սիրելի:

Կ'արհամարհեմ կեանք փարսամ,  
 Ճոխ սեղաններ, համազամ  
 Գաւանանքս մեջ հլու

Այլոց օգնութեան փութամ:  
 Հայ Արի եմ զիս Արի,  
 Գաւանանքին պիկզ փարի:

« Հաւասարիմ Աւսուցոյս ».

Բժախնիք զիս պոսույս.

Հնազանդիմ մեծերուս:

Այս է պերճանք իմ հոգոյս:

Հայ Արի եմ հայ Արի  
 Հաւասքս անդրբունելի:

Գործերուս մեջ ուրբամիս,

Փիւր անուղ եւ բարեմիս,

Հանոյք է ինձ աւխասանք,

Չ'եմ խնայեռ ոչ մեկ ջանք:

Հայ Արի եմ հայ Արի,

Մուլութիւնն ինձ տեսիլի:

Կ'օգնեմ ես իւղն սկարին,

Կ'առաջնորդեմ ընկերին,

Գաւանանքս այս սուրբ է,

Ես չ'եմ դրժեռ իմ ուխտին:

Հայ Արի եմ հայ Արի,

Սուրբ ուխտս ինձ հանելի:

Ազգ, ընկեր եւ հայրենիք,

Ասոնք են իմ ընտանիք,

Որոնց որդին՝ հարազատ,

Պիտի ապրիմ միտ ազատ:

Հայ Արի եմ հայ Արի,

Նախնի քաջաց բոնորդի:

Քայլեմ յա՛ռաջ միտ զուարթ,

Անյեւազարձ ու անխախտ,

Սեւեռուճս է Արարատ,

Հոգևով սրտով դիմեմ անդ:

Հայ Արի եմ բունց Արի,

Նպասակին պիկզ փարի:

Վեա նակասով ես ժուռ զամ,

Մարմնով մտով զարգանամ,

Բարձրացնեմ բարձրանամ,

Վեհ ազգիս պարճանք ըլլամ:


Արի արանց հայ Արի,

Գրօսակս է պանծալի:

Մագրի գիւղ

ԳՅՈՒԼՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

### ԱՆՑԵԱԼ ՅՈՒՇԵՐԻՍ



Հայ սկառուսներուն

Հաւատարմով որ կատարուած իրողութիւնները գործնական դասը շատ աւելի տպաւորիչ ու նրաճանգիչ են քան երեւակայութեան ծրնունդները, ես կը պատմեմ եղելութիւններ, որոնք թէև փոքր, բայց նկատելով որ զանոնք կատարողները մանուկներ են և ոչ թէ փորձառական կեանքին մէջ թրծուածները, կը յուսամ որ իրենց բարեբար ազդեցութիւնը կ'ունենան:

Մենք ունէինք կուտակեր ու յանդուգն ընկեր մը, Մելքոնը, որուն հետ խօսիլը գրեթէ

մեղք էր. քանի որ ամենափոքր բառ մը պատճառ պիտի դառնար կռիւի, խռովութեան:

Անոնք որ Մելքոնը չէին ճանչցած [իր հոգիին թաքնուած յատկութիւններովը, կը զըզուէին իրմէն ու իր անունը կ'արտասանէին միայն այն ժամանակ՝ երբ կ'ուզէին ըսել թէ կռիւ պիտի ըլլայ — Մեյրոն կայ հոս! Մեյրոն պիտի ըլլայ! ...

Բայց այնպէս չէր Մելքոնը՝ ինչ որ կը տեսնէին, այլ այն՝ ինչ որ կը զգար այդ պատանին որ իմ հասակակիցս էր, մտերիմս, ու ես միայն գիտէի թէ ինչ պատճառներ կային զինքը այդ աստիճան կուտարար դարձնելու:

Մելքոնը բողոքն էր թշնամիին դէմ, ինքը համայն գրաւուած այդ ցարմամով, և զգալով որ հայ մանուկը կը վախնայ թշնամի մանուկ-



ներէն. կը կատարէր, կը փրփրէր. ու իր այդ մտալլկումը պատճառ դարձած էր որ պատմէ այդ փահկոսները:

— «Չեռքերնիդ վեր վերցնել սորվեցէք ու եթէ թշնամի չգտնէք՝ իմ գլխիս զարկէք. թող հայ մանուկը սովրի իր իրաւունքը իր կռուփովը պաշտպանել» կ'ըսէր ու Մելքոնը ալ տեսակները կը պաշտէր, անոնց մտերմն էր ու անզուգական ընկերը:

Բնականաբար այս բնաւորութեամբ օժտուած պատանի մը թուրք խափիկներու և փոշխներու աչքին պիտի գործէր:

Ու օր մըն ալ, թուրք տղաքը ճամբան վրան կը յարձակին, թելադրուած փոշխներէ, որոնք հոն, լակոտներուն քովը կեցած կ'ընր րանգնէն ու կը զրգոին վայրենիներու գաւակնելը — կեպերսիրիկի — պոռալով:

Ու անա իւրաքանչիւր լակոտ մէջքէն կը հանէ մէյմէյ դանակ, խանչիւր, բայց այն պահուն երբ պիտի մօտենան ու զարնեն Մելքոն ասոնցմէ տկարագոյնին վրայ կը յարձակի, ձեռքէն կը խլէ խանչիւրը ու իր մէջքը պատին տուած ինքզինքը կը պաշտպանէ խանչիւրով:

Փոշխներու գրգռութիւնը, լակոտներուն կատաղութիւնը կը բազում պատճառ ու Մելքոնը տեսնելով որ իր ազատու մը անկարելի է, վերջին ճիգը կը փորձէ և ինքը կը յարձակի խումրին վրան որոնք տեղի կուտան ու այս պիտի ճամբան կը բացուի ու Մելքոնը փախելով կ'ազատուի:

Փնտառութիւնը օգուտ չունէին, որովհետև Մելքոնը ապահով ձեռքերու մէջ էր: Յաջորդ երեկոյ Մելքոնը կը մեկնէր մեզմէ:

\*  
\*\*

Մելքոնը նոյն տարին իսկ սուրհանդակ է. սահմանէ սահման կ'երթայ-կուգայ տակուին 14 15 տարեկան պատանի մը. որ կը գործէ մեծի մը պէս և մեծէ մը աւելի անձնուիրոտի բութեամբ:

Դժբախտաբար, օր մը, սահմանին վրայ կը ձերբակալուի, և քանի որ իր քովը գտնուած նամակները չէր կրնար այրել կամ ընտել, կը պարտաւորուի փոռելի երեսի վրայ գետինը, հանգստի մամերուն, և պատառ պատառ կլլել այդ թուղթերը, ասանց մանսարմաներու ու շաղրութիւնը գրաւելու:

Մելքոնը փոխադրուեցաւ Մուշ, ուր սկսեց դատարարութիւնը:

Առաջին դատարարութեան, ուր ես ներկայ էի, քանի մը նշաններ ըրինք իրարու. անիկա

ինծի կ'ըսէր իր աչքերու քթթումովը թէ պարսաւս մնացիր. բայց ինչ բանի չէի կրնար հասկնալ:

Յաջորդ դատարարութիւնը տեղի պիտի ունենար շաբաթ մը վերջ. Մելքոնը դատարանէն մեկնումի պահուն իր աջ ձեռքին ցուցամատին մէկ նշանովը փախչելու նշանը տուաւ. այժմ հասկցայ որ միջոցներ կ'ուզէ փախելու համար:

Գործադիր Մարմինս անձրկած էր. ինչպէս և ինչ միջոցներով փախցնել զինքը, երբ երկու զինուոր աջ ու ձախ կը քալեն հետը:

Մեր մտատանջութեան մասնակից էր նաև Եղիշէն, անուս հանձարը, որ տեսնելով մեր յուսահատութիւնը, միջամտեց, ստանձնելով այդ հոգը:

Վստահելէն դատ ինչ կրնայինք ընել:

Դատարարութեան օրը եկած էր. Եղիշէն լարած էր իր «Հետեւակ»ի ցանցերը: Ես ալ զացած էի դատարան, բայց, խոստովանիմ որ ոչ մէկ ծրագիր ունէի զլխիս մէջ, ձգած էի զէպքերու բերումին:

Մելքոնը բերուեցաւ:

Այդ շրջաններու անգործներու և հետաքրքիրներու բազմութիւն մը դատարանին նրբանցքները կը լեցնէր. ամէն օր, լսելու համար թէ ինչ կ'անցնի կ'դառնայ դատարանին մէջ. յեղափոխականներուն շուրջ:

Եղիշէն կարգադրած էր այսպէս: Տղայ մը Մելքոնի հասակով ձեռք մը հին, կտրտած հագուստ և գլխարկ մը ալիւրի մէջ թաթխուած, իրր ջաշացականի զգեստ, վրան թաշկինակով ծածկած, պատրաստ կեցած է ուրիշներ՝ ուրիշ տեղեր՝ ուրիշ պատրաստութեամբ, իսկ ինքը գլխին վէս դրած և ճերմակ մըն ալ փատթած բոլորը, աչալուրջ կը հսկէր:

Բնատարկեալը դատարանին դռնէն ներս մտած պահուն, երբ ետեւէն բաւական բազմութիւն կը հետեւէր իրր թէ ժողովրդեան կողմէն կը հրուի, ինքը որ Մելքոնին անմիջապէս ետին էր ու կը քալէր, կը սեղմէ Մելքոնի ուսը Մելքոնը կը ծախի, իսկ ինքը, իրր թէ ետեւէն եղած ճնշումի մը տակ կը զլորուի ու կ'իյնայ երկու զօրքերու մէջ, բայց այնպէս մը որ բաւական կ'ըլլայ Մելքոնը ծածկել զօրքերուն աչքէն, ու մինչև որ ճերմակը փատթած թուրք պատանին (Եղիշէն) ոտքի կ'ելնէ, Մելքոնը բազմութեան ոտքի մէջտեղերէն ինքզինքը դուրս կը ընտէ, ուր պատանին անմիջապէս մուտ մէկ անկիւնը իրեն կը հագցնէ ջաշացականի հագուստները ու այդպէս Մելքոնը



կը կերպարանս փոխուի, մի քիչ սլիւր ալ երեւոր քսելով, մինչ միւս կողմը «գալտը՝ գալտը», թուրքերը եւն. կը պոսան, զինուորները ամբողջ կը պատանն, փախողին ետեւէն վազելու հաւար նրբանցքներէն վար, դռներէն դուրս որոնց կ'առաջնորդէր Եղիշէն, այս անգամ «Ֆէս»ով բայց առանց ճերմակ փաթթոցի, իսկ միւս դռնէն ջազացականը դուրս կ'ելնէր. դատարանին չէնքին վարերը, թուրք գերեզմաննոցին մօտերը, արեւին դէմ պարկե լու, թողլով որ զինքը փնտռելու վաղեն հոս ու հոն, բացի իր գտնուած տեղէն:

Նոյն օրը իրիկուան մեր ժողովին ներկայ գտնուեցան Եղիշէն ու Մելքոնը մին ճերմակ փաթթոցով իսկ միւսը ջազացականի հագուստովը:

ՄԵՍՍԿ ՆՍԱԼՊԱՆՏՆԱՆ



ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Նախնական եւ անմիջական դարմաններու ճանօթութիւններ  
Ի.

Վերադարձանու մի մէջ ամէնէն աւելի ուշադրութիւն ընելիք կէտը մարմանները է: Վերք մը դարմանելէ առաջ պէտք է ձեռքերը օճառով լաւ մը լուայ, եղունգները մաքրել, և վերջն ալ ձեռքերը հակահիսիչ հեղուկի մը մէջ խոթել. օր. սիւպլիմէի լուծաջուրի մէջ: Ձեռքերը որչափ ալ մսքուր ըլլան, պէտք չէ բնաւ վերքին դպնել: Վերադարձանու մի նիւթերը, ամանները և գործիքներն ալ պէտք է կատարելապէս մաքուր ըլլան: Մաքրութեան ինչո՞ւ այսքան ուշադրութիւն պէտք է ընէք գիտէ՞ք. որովհետեւ օդին մէջ, ինչպէս նաև բոլոր առարկաներուն վրայ ալ քրով շտանուելիք շատ փոքր կենդանիներ կան, որոնց միզոնայ կ'ըսենք եթէ ասոնք վերքին մէջ մտնեն, զայն կ'աղտոտեն ու բուժուելուն արգելք կ'ըլլան:

Վերադարձանու մի մէջ ամէնէն աւելի ուշադրութիւն ընելիք կէտը մարմանները է: Վերք մը դարմանելէ առաջ պէտք է ձեռքերը օճառով լաւ մը լուայ, եղունգները մաքրել, և վերջն ալ ձեռքերը հակահիսիչ հեղուկի մը մէջ խոթել. օր. սիւպլիմէի լուծաջուրի մէջ: Ձեռքերը որչափ ալ մսքուր ըլլան, պէտք չէ բնաւ վերքին դպնել: Վերադարձանու մի նիւթերը, ամանները և գործիքներն ալ պէտք է կատարելապէս մաքուր ըլլան: Մաքրութեան ինչո՞ւ այսքան ուշադրութիւն պէտք է ընէք գիտէ՞ք. որովհետեւ օդին մէջ, ինչպէս նաև բոլոր առարկաներուն վրայ ալ քրով շտանուելիք շատ փոքր կենդանիներ կան, որոնց միզոնայ կ'ըսենք եթէ ասոնք վերքին մէջ մտնեն, զայն կ'աղտոտեն ու բուժուելուն արգելք կ'ըլլան:

տեւը վիրաւորներ դարմանելով և նոյն իսկ վիրաւորներ փոխադրելով: Քանի որ Հայրենիքը վտանգի մէջ էր պէտք ունէր իր բոլոր զաւակներուն օգնութեանը, ինչո՞ւ սկսուաներն ալ իրենց մասնակցութիւնը չբերէին իրենց սիրեցեալ Հայրենիքին ազատագրմանը համար:

Վերք մը դարմանելը շատերուն համար դիւրին բան մը կ'ելլուայ. բայց ան կարծուածին չափ գիւրին չէ, մեծ ուշադրութիւն և կատարեալ մաքրութիւն անհրաժեշտ է: Պզտիկ անզգուշութիւն մը պատճառ կ'ըլլայ վերքին գէշանալուն:

Արկածի մը պահուն, սկսուած մը պէտք է վերքին նախնական դարմանները լնէ, բայց առաջին առթիւ վերքը ցոյց տալու է բժիշկի մը, և եթէ բժիշկը արտօնէ զայն դարմանելու, անոր հրահանգներուն համաձայն դարմանելու է:

Վերադարձանու մի մէջ ամէնէն աւելի ուշադրութիւն ընելիք կէտը մարմանները է: Վերք մը դարմանելէ առաջ պէտք է ձեռքերը օճառով լաւ մը լուայ, եղունգները մաքրել, և վերջն ալ ձեռքերը հակահիսիչ հեղուկի մը մէջ խոթել. օր. սիւպլիմէի լուծաջուրի մէջ: Ձեռքերը որչափ ալ մսքուր ըլլան, պէտք չէ բնաւ վերքին դպնել: Վերադարձանու մի նիւթերը, ամանները և գործիքներն ալ պէտք է կատարելապէս մաքուր ըլլան: Մաքրութեան ինչո՞ւ այսքան ուշադրութիւն պէտք է ընէք գիտէ՞ք. որովհետեւ օդին մէջ, ինչպէս նաև բոլոր առարկաներուն վրայ ալ քրով շտանուելիք շատ փոքր կենդանիներ կան, որոնց միզոնայ կ'ըսենք եթէ ասոնք վերքին մէջ մտնեն, զայն կ'աղտոտեն ու բուժուելուն արգելք կ'ըլլան:

Դեղեր կան որոնք միզոնայները կ'սպաննեն, ասոնց հակամեխիչ դեղեր կ'ըսենք: Գլխաւոր հակամեխիչ դեղերն են.

- Ալիօլ, (խորթթօ) ճերմակ հեղուկ մը.
- Օ օզիմէն, ճերմակ հեղուկ մը, որ թափելէ վերջ կը փրփրի:
- Ասիս պոնիզ ճերմակ փոշի մը.
- Սիւպլիմէ, փոշի մը որուն կլոր կոճակի ձև մը կուտան, և կարմիր ալ գոյն մը ունի. աւիկա շատ թունաւոր է:
- Բեռնանկանաք ջր բօքաս, գոց կարմիր փոշի մը:
- Ձեռքերը հակահիսիչու համար, զանոնք լաւ մը լուայէ վերջ, սիւպլիմէի լուծաջուրի մէջ խոթելու է. այս լուծաջուրը պատրաստելու համար, յախճապակիէ (մետաղէ պէտք չէ ըլլայ)



ամանի մը մէջ մէկ քիւրճի չափ մաքուր ջուր կը լեցնէք և մէջն ալ մէկ կռամ սիւպլիմէ կը նետէք: Վերադարձանու մի հականեխելու համար այս լուծաջուրին մէջ խոթելու չէ, որովհետև սիւպլիմէն մետաղները կը սեւցնէ: Սիւպլիմէն չգտնուած ժամանակ, ձեռքերը լաւ մը լուալէ վերջ, զանոնք ալքօլով ալ թռչելը բաւական է: Գործիքները հականեխելու համար երկու շատ պարզ միջոց կայ, Ա. գործիքները պնակի մը մէջ կը դնէք, վրան քիչ մը ալքօլ կը լեցնէք և ալքօլը կը բռնկցնէք. ալքօլը այրելով գործիքները կը տաքցնէ և վրայի միգրոպները կ'սպաննէ. Բ. գործիքները ջուրով լեցուն ամանի մէջ դնելով՝ ջուրը կ'եռացնէք. եռացած ջուրը միգրոպները լաւ մը կ'սպաննէ:

Վէրքին վրայ դրուելիք նիւթերն ալ մաքուր և հականեխուած պէտք է ըլլան: Այս նիւթերը ընդհանրապէս հականեխուած ու գոց բազէթներուն մէջ կ'ըլլան. վերադարձանու մի ժամանակ միայն մաքուր ձեռքերով կը բանանք ու վէրքին վրայ կը դնենք:

Վերադարձանու մը բնաւ առանց գործիքի պէտք չէ ընել: Վերադարձանու մի համար հետեւեալ գործիքները անհրաժեշտ են.

Ունելիք, (pince), վերադարձանու մի նիւթերը բռնելու համար. պզտիկ մկրատի մը ձևը ունի, վարի ծայրերը քիչ մը լայն են:

Մկրատ վր, վերադարձանու մի նիւթերը կտրելու համար:

Անգլիական գնդասեղներ (épingle anglaise) որոնք պէտք կ'ըլլայ վերակապերը բռնել տալու համար:

Անհրաժեշտ է նաև գործիքները եռացնելու համար աման մը:

Վէրքերու վրայ դրուելիք նիւթերն են.

Կազը, որ բարակ լաթ մըն է (թիւլպէնտ)

Բաւկալը, որ ձերմակ ու կակուղ նիւթ մըն է:

Բարակ մուշամպայի կտոր մը, և կամ ջուրը չ'անցնող թափթաշի կտոր մը:

Զանազան երկայնութեամբ ու լայնքով վերակապեր, վէրքերը կապելու համար:

Անշուշտ վերադարձանու մի համար դեռ շատ նիւթեր, գործիքներ ու դեղեր կան, բայց աւելորդ կը սեպենք ասոնց մասին խօսիլը՝ վերը յիշուածները արդէն սկառտի մը համար բաւական են, որպէս զի կարենայ վերաւորեալի անմիջական ու նախնական պայմաններ ընել:

Հիմայ շատ պարզ ու համառօտ կերպով պիտի բացատրեմ թէ՛ սկառտ մը ինչ անմի-


ջական դարձաններ պէտք է ընէ վերաւորեալի մը որպէս զի նախ, անոր վէրքին արիւնահոսութիւնը դադրեցնէ, և երկրորդ, թող շտայ որ, վէրքը անդարձան մնալով գէշանայ ու նոր բարդութիւններու պատճառ ըլլայ:

Նախ, իբր ընդհանուր կանոն մը ըսեմ թէ, վէրքի մը պէտք չէ բնաւ դպիլ ո՛չ մատներով և ոչ ալ գործիքներով, այլ՝ միայն վերադարձանու մի նիւթերով, որո՛ք կատարելապէս մաքուր պէտք է ըլլան:

Երբոր վէրքին վրայ օտար փոքր մարմիններ գտնուին, պէտք է աշխատիք որ վէրքը լուացած միջոցնիդ անոնք դուրս ելլեն ջուրին ճնշումովը: Երբոր այսպէսով դուրս չելլեն, մաքուր կազով մը կրնաք դուրս հանել զանոնք. առանց վէրքին վրայ փոքրիկ ճնշում մը իսկ ընելու: Երբոր աւելի մեծ մարմիններ գտնուին, որ, հագուստի կտորներ կամ ոսկրի կտորներ, որքան վէրքէն դուրս ցցուած ըլլան, այն ատեն կրնաք այս մարմինները մատներով և կամ ունելիով դուրս քաշել, առանց սակայն վիրիսի դպելու:

Բայց, երբ կը տեսնէք թէ՛ խորունկ վէրքէ անընդհատ արիւն կը հոսի, այն ատեն ձեռքերնիդ կազի թանձր ու մաքուր կտորներ առնելով ճնշելու էք վէրքին այն մասը ուրկէ արիւնը կը հոսի և ձեռքի կազովնիդ կոմաց կամաց վէրքին պարապօթիւնը լեցնելու էք և վրան բամպակի թանձր խաւ մը դնելով ուժով մը կապելու էք, արիւնահոսութիւնը դադրեցնելու համար:

Իսկ թէ՛ ինչ ընելու է երբոր արիւնահոսութիւնը երակի մը կամ շնջերակի մը կտրելէն յառաջ գայ և շատ ուժգին ըլլայ. այդ մասին արդէն անցեալ անգամ խօսեցայ (պատկեր 1 և 2):



Նկար 1. Նախորդ թիւին սխալը սրբագրուած

Իսկ եթէ վէրքի մը մէջ հրացանի մը գընդակ մը տեսնէք, միտքերնուդ անգամ անցնելու չէք գայն հանել, որովհետև գնդակը տաքցած վիճակի մէջ հրացանէն դուրս ելլելով, իր վրայ միգրոպ չ'ունենար, և մարմնոյն մէջ մըտ-



նելով աղտոտ վէրք մը չը կազմեր. կան մարդիկ որոնց մարմնոյն մէջ գնդակը տարիններով մնացած է, առանց վնաս մը պատճառելու:

Ակառու մը, արին նահասութիւնը դողրեցնելու կերպը գիտնալէ զսա, պէտք է գիտնայ նաև թէ, վէրքի մը ինչ նախնական դարմաններ ընելու է, որպէս զի չը գէշանայ: Բայց դարձեալ կը կրկնեմ, նախնական դարմանները ընելով հանդերձ. պէտք է բժիշկին իմաց տայ, և առանց անոր պատուէրին ոչինչ ընել իր կողմէն. որովհետեւ վէրք դարմանելը շատ փոփուկ գործ մըն է. և պզտիկ անզգուշութիւն մը կամ սխալ մը, կրնայ մեծ հետեւանքներ ունենալ:

Երբոր վէրք մը տեսնէք, ուշադրութիւն ընելիք առաջին բաներնիդ պէտք է ըլլայ թէ՛ աղտոտ վէրք մըն է: Երբոր վէրքին մէջ բնաւ աղտոտութեան հետք մը չըլլայ, կ'ըսենք թէ՛ մաքուր վիրք մըն է, իսկ եթէ վէրքին մէջ աղտոտութիւն, ինչպէս նաև դեղինկեկ հեղուկ մը գտնուի, կ'ըսենք թէ վիրքը աղտոտ է, վէրքին մէջի դեղինկեկ հեղուկին քարսիս կ'ըսեն:

Հրացանի գնդակէն յառաջ եկած վէրքը մաքուր վէրք մըն է: Երբոր մատերնիդ զմելով մը կտրէք, այդ վէրքը մաքուր վէրք մըն է: Բայց երբոր ատոր կարեւորութիւն չըտաք և չըդարմանէք, պիտի տեսնէք թէ՛ անմիջապէս ան կը թարախոտի ու աղտոտ վէրք կը դառնայ:

Վիրադարմանումին նպատակն է վէրքը պաշտպանել դուրսի վնասակար նիւթերէն, անոր մէջի միզրոպները սպաննել և զայն մաքուր վիճակի մը մէջ դնել. որպէս զի գոցուի:

Ուրեմն, վէրք մը բացած ժամանակնիդ, նախ, պէտք է զգուշութիւն լնէք որպէս զի դուրսէն աղտոտութիւն չըմտնէ անոր մէջ. Ասոր համար է որ, վէրք մը դարմանելէ առաջ, նախ վէրքին չորս կողմը ալքօլով լաւ մը կը մաքրեն: Երկրորդ, պէտք է աշխատիք որպէս զի վէրքին մէջի միզրոպները կ'սպաննէք որպէս զի այդ աղտոտ վէրքը մաքուր վէրք մը ըլլայ. մաքուր վէրք մը ըլլալէ վերջն ալ, ձեր նպատակը պիտի ըլլայ ժամ առաջ գոցել այդ վէրքը:

Վէրքին մէջի միզրոպները սպաննելու համար պէտք է զայն լուալ հականեխիզ դեղերով: Աղտոտ վէրքերու համար լաւագոյն հականեխիզ դեղերը ալօլ ու օ օզսիժեկեն են: Վէրքը ասանցմով լուալէ վերջ չոր կազով մը չորցնելու է, որպէս զի վէրքին վրայ թարախ չըմնայ:

Վրան վէրքէն քիչ մը մեծ կտոր մը կաղ դնելու է, անոր վրայ ալ բամպակի կտոր մը, և այս ամբողջը վիրակապով մը կապելու է:

Մաքուր վէրքերու համար քիւնթիւն s'hosը լաւագոյն դեղն է. շուտ մը վէրքը կը գոցէ: Բայց աղտոտ վէրքերու նախապէս քսելը լաւ է, որովհետեւ զանոնք շուտ մը գոցելով, թարախը վէրքին մէջը կը ձգէ, ինչ որ վէրքին դարձեալ բացուելուն պատճառ կ'ըլլայ:

Ուրեմն, վէրք մը լուալէ վերջ, զայն գոցելու համար, վրան նախ կաղի կտոր մը և յետոյ վիրակապով պիտի կապէք: Յաջորդով պիտի բացատրեմ վէրք մը կապելու ձևերը:

(Շարունակելի) Յ. Ք.

### Հ Ր Ա Ի Է Ր

#### Չօն նորագաւ Հայաստանին

Հապօն, յառաջ հայ Արիներ  
Դէպի Երկիր աւերակ.  
Յանելու հոն կանանց յոյսեր  
Մեր ձեռքերով բարունակ:


Դէպի Մասիս, հայ մարզիկներ  
Հապօն, քայներ անվարան.  
Թող բողբոջին կոյս ծաղիկներ  
Դըրօշնուս տակ անսասան:

Յառաջ, յառաջ դէպի Երկիր  
Առաջնորդներ «լուսատու».  
Հայաստանի ճակտին կարմիր,  
Կանաչ նարոտ կապելու:

Հապօն, յառաջ հայ Արիներ  
Դէպի Երկիր աւերակ  
Յանելու հոն կանանց յոյսեր  
Բազուկներով բարունակ:

Գառը Գիւղ

ՃԱՆԻԿ







Գումգարուի սկաուտները Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղի անդամներով միասին

## ՍԿԱՈՒՏԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Սիրելի ընկեր . . .

Դեկտեմբեր 14ի կիրակի օրը կեանքիս ամէնէն նըշանաւոր օրերէն մէկն եղաւ, մինչեւ մահս այդ օրը չբպիտի մոռնամ որովհետեւ այդ հանդիսաւոր օրուան մէջ ես Աստուծոյ եւ մարդոց ներկայութեան երզում ըրի պատուոյս վրայ ըլլալ նոր մարդ:

Այն օր Եկնի Գափուի եկեղեցին Ս Պատրիարքը կը պառարագէր, մենք Գում Գափուի հայ սկաուտներս մեր մարզաբանը հաւարուելով կարգ կազմեցինք եւ սկաուտական քայլերգը երգելով ուղղուեցանք դէպի եկեղեցի: Հոն եկեղեցիին բակը ցուպերնիս չորսական ի բար կցելով ձգեցինք եւ մտանք ներս ուր ահագին բազմութիւն կար. Ս. Պատրիարքը սկիսած էր քարոզելու: Քարոզը վերջանալէ ետքը սկսաւ մեր սկաուտներու երգումի հանդիսաւոր արարողութիւնը. կարգ կազմելով մի առ մի մօտեցանք խորան եւ հոն Ս. Պատրիարքին առջեւ ձեռքերնիս դրած խաչին ու աւետարանին վրայ արտասանեցինք երգումը որ կը բխէր մեր սրտի խորէն. երբ կարգը եկաւ ինձի, ես ալ մօտեցայ խորանին քով,

բայց սիրոս լեցուն էր յուզմունքով, կը զգայի որ կը կատարեմ մեծ եւ սրբազան ուխտ մը. Կը զգայի որ վարէն հասարակութիւնը սրտասուալից աչքերով ինձ կը նայէր, շրթունքներս կը դողային բայց հոգիիս բոլոր ուժով արտասանեցի իմ երզումս որ միշտ ու միշտ բարձրածայր պիտի հնչէ խղճիս մէջ:

Երգումէն ետքը ամէն մէկերուս թեւին վրայ կը կախուէր ժապաւէն մը. այլեւս մենք ճշտարիտ սկաուտներ եղած էինք այսինքն քայլ մըն ալ առաջ նետած էինք մեր իտէալի ճամբուն մէջ:

Պատարարէն ետքը թափ ը կազմեցինք եւ ժողովուրդին նանդավառութեան մէջէն ելանք դուրս, մինչ ֆանֆառը կը նուագէր հայկական շայլերգը, բամբ որոտանք:

Հօսանք մարզաբան հոն Պ. Յակոբեան իօսքը մեզի ուղղելով բացատրեց այդ օրուան նշանակութիւնը, ըսաւ որ սկաուտական զգեստի սիրուն չէ որ տղայ մը մտնելու է սկաուտական դրօշին տակ այլ համոզմունքով եւ նուիրումով:

Այդ օրը մեր մէջ ներկայ էին նաեւ չորս ֆրանսացի սկաուտ զինուորայաններ որոնց հետ լուսանկարուեցանք. Ընդունիր ընկեր սկաուտական անկեղծ բարիս:

Գում. Գարու

ԱՆԴՐԱՆԻԿ ՓԷՂԻՎԱՆԵԱՆ





### ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՂԵՐ

### ՄԱՐՄԵՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԲՈՃԻՆ

### ԳԼԽԱԻՈՐ ԵՒ ՈՒՂԻՂ ՄԻՉՈՅԸ

**ԽԱՂԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ.** — Խաղերը պէտք է կարեւոր տեղ մը գրաւեն սկաուտութեան մէջ խմբակաւորները իրենց ջանքն ու տաղանդը պիտի յատկացնեն խաղերու վերածելու համար, սկաուտներու վերաբերող կարգ մը ծանօթութիւններ.

Արդէն ընդունուած իսկ է թէ պատանիները 8 15 տարեկան) աւելի լաւ կ'ըմբռնեն իրենց եզած հրահանգումը, եթէ անիկա ըլլայ խաղի մեկին տակ. Անոնք իրենց պատճառած զուարճութենէն զատ, կը մշակեն նաեւ տղուն մէջ բարոյական եւ ֆիզիքական զարգացումը, կը նպաստեն մարմնոյն զօրութեան, տակունքեան թիֆեաշարժութեան, ճկունութեան, ինչպէս նաեւ կը սրեն միտքը, կ'անցնեն ճարտարութիւնը, Բարոյական սեսակէտէն՝ անոնք, կ'տեսնեն համարաշփոթեան եւ կարապահութեան ոգին, Էր զօրացնեն կամրը, պատասխանատուութեան գոյնը կը ներշնչեն, եւ միշտ վառ կը պահեն ոգիւրութիւնն ու զուարթութիւնը.

Բայց որպէսզի յարած մնան տղար դէպի խաղը, օգտուն անկէ եւ վատնկէ զերծ ըլլա՞ն, խաղերը կը պահանջեն կանոնաւոր վարժութիւններ մանաւանդ երբ պզտիկներ են անոնք որ կը նուիրուին անոք, պէտք է որ մեծերուն հսկողութեան տակ ըլլայ այն. Այդ պաշտօնը պիտի առնեն խմբակաւորները իրենց սկաուտներուն հանդէպ.

Խաղեր կան որոնք դիւրին, կարճ տեւողութեամբ, մեծ ճիգեր չեն պահանջեր. իսկ կան ալ, որոնք ընդհակառակը, ժամանակէ կարօտ են, կը պահանջեն ոյժի սպառում եւ մասնաւոր զգուշութիւններ, որով խմբակաւորներուն կ'իյնայ դարձեալ խաղերը կարգի դնել ոչ միայն սկաուտներուն ճաշակին եւ փափարին համաձայն այլ եւ իրենց խումբին յոգնութեան վիճակը, տեղւոյն դիրքը, մթնոլորտական պարագաները եւ խաղացողներու քանակը նկատի ունենալով.

Այս խաղերէն մէկ քանիին համար, գետինը ըլլալու է տափարակ. ոչ քարուտ, ապակիի կտորուանքներէ զերծ եւ վերջապէս կակուղ.

Սկաուտական խաղերուն մէջ կան այնպէսներ որոնք մկանային յոգնութենէ աւելի, ճարտարութիւն, դիտողութիւն եւ երեւակայութիւն կը պահանջեն.

Խմբակաւորները պիտի ընտրեն զանազան խաղերու մէջէն անոնք, որոնք ներկայ ժամուն եւ տեղւոյն կը յարմարին.

Խաղերը պէտք չէ զրգոնեն հակառակութիւն, նախանձ, եւն., եւ պէտք չէ որ կռուի եւ խօսքերու տեղի տան ու վերջապէս տգեղ ձեւ մը առնեն (յնչոր մեր մէջ յաճախ կը պատահի). Ամեն խարդախութիւն արդէն պիտի հակառակէր սկաուտի մը խոստումներուն՝ ու խիղճին, եւ յետոյ այն խաղը որուն մէջ մէկը խաբարայական միջոցներ ի գործ կը դնէ շահելու համար՝ կը դադրի այլեւս հետաքրքրաշարժ ըլլալէ, եւ պարզապէս անծանօթ կամ նիւթական (inlèret) շահու համար կ'ըլլայ, ինչ որ «խաղ» ըլլալէ կը դադրի.

Յաջող թիւով պիտի տանք ֆրանսական «Le Livre de l'Eclaircur» գրքէն քաղուած զուարճալի եւ օգտակար խաղերու շարք մը որոնք տակաւին չեն ճանչցուած մեր սկաուտներէն, որոնք կը յուսամ թէ քիչ ատենէն ի գործ պիտի դնեն իրենց ստրվածը.

«Նոր Դպրոց» 6 Խմբակ քիւ 1  
Լ. Ն. ՄԵՆՁԻՆԻԱՆ

Այդ զէս միայն պէտք է որակել այս գերազանցորէն յատկանշական շարժումը որ վերստիսած է «Հայ Սկաուտ»ի ծնունդով, պոսթկուսի մը հաւազօր, աւելի ուժեղ, աւելի ցայտուն քան հինը, երեկուան մահաոյր ճնշումին հակադրօրէն աւելի բոցավառ եւ բարոստ:

Միակը եւ ահեհաուղիղ միջոցն է որ մեզ պիտի տանի ազգային վարդապոյն կեանքի վարդապոյնը, դէպի բոսոր ազապութիւնը:

Եւ վերջապէս կ'ուզե՞նք ապրիլ թէ ոչ անտարակոյս այո՞, եւ, եթէ շարժումի ընդունակ սաղմն է կեանքի սկիզբը, կորիզը՝ պտուղին, ամէն տարակոյսէ վեր է, որ վաղուայ կեանքի, վաղուայ պտուղին համար, այսօրուան սաղմը, կորիզը պէտք է պատրաստենք, առողջ, եւ նպատակայարժար շարժումի ընդունակ կենսունակ սաղմը, եւ, այսօր իսկ. ամենափոքր յապաղում ոչ է արդէն: Եթէ գոյութիւն ունին դեռ այնպիսիներ որոնք գիտական հիմերու մասին կը տարակուսին, պատմական փաստերը կենդանի օրինակներ կրնան ծառայել անոնց, եւ առանց շատ հեռուն երթալու, թող հետաքրքրուին միայն թէ ինչպէ՞ս Սերպերը, Յոյները, Պուլկարները եւ Հունգարները, իրենց անկախութեան սկիզբը փարեցան ազգային ֆիզիքական գոյութիւնը հիմնաւորող այդ միակ միջոցին:

Դեռ նորերս հունգար մարզանքի ուսուցիչ մը ինձ կը պատմէր մանրամասնութիւնները այն համազգային հանգանակութեան, որուն ձեռնարկուած էր իրենց անկախութեան առաջին օրերուն, հասոյթը յատկացուելու համար ազգային մարմնակրթութեան, եւ իմ զարմացած հարցումին, նա երեք անգամ կրկնեց «տրայուն տ դրայցիկ միլիարտ հէլլեր»ն...: Ու ազգատ կին մը, իր թաշկինակէն զատ ոչինչ ունէր ձգելու փողոցները դրուած մեծ սնտուկներուն մէջ:

Բոլոր այդ ազգերը ապրեցան ու կ'ապրին այդ կերպով: Եւ դեռ ի՞նչ դաս հանեցինք այս հինգ տարուան պատերազմին մէջ, եթէ ոչ միևնոյն դասը, պատմութեան աւանդած մեծ դասը: Գաղափարը յաճախ անզօր է, եւ միշտ վերջին խօսքը դեռ եւս երկար ատեն բուռնցքինն է, եւ եթէ ըսենք որ նոյն իսկ շատ հեռաւոր օր մը, եթէ միտքը կամ գաղափարը պիտի ունենան



վերջին խօսքը ըսելու, զայն պատրաստողը նորէն պիտի ըլլայ ֆիզիքը, միայն տողջ ֆիզիքը, վասնզի առանց անոր գոյութիւնը առողջ մտքի անբնական, հակազիտական է և անպայման թիւրիմացութիւն:

Կարելի է մտածել որ առանց ազգային առողջ ֆիզիքի Լինկի Հայրենիքը պիտի ծնէր տիեզերական մտքեր, որ պիտիք են կնուտ Համարն, Պրեօրնսըն, Իպսէն, Ինչ կարելի է սպասել վատոյժ սրտերէ, իսկ տխեղժ ու դարեր շարունակ ընկճուած ծայրատուած ազգային ֆիզիքէն ինչ, միանգամ եթէ բանանք մեր աչքերը պիտի տեսնենք որ ազգերու յաղթանակը դեռ եւս չի վերջացաւ Գերմանիոյ պարտութեամբ, այլ շարունակուեցան ամենուրեք բազուկներու յաղթանակի վերջնական տօները, կատարուեցան Stadt-Persching և շնորհ, ուր ամեն ազգ պատեհութիւններ յայտարարեց յաղթական բողոքները ցուցադրելու, իրենց տգատութիւնն կողմ մուրճերը:

Մենք այս բողոքէն յետոյ պիտի ուզենք դեռ կոյր մնալ ու մեր ազիտութեան սե յաշաւակնոտութեան մէջ մեզ խեղդել, փաստը ցոյց կուտայ թէ ո՛չ, Պոլիսը պերճօրէն և առաջինը կուտայ արդէն օրինակը, որ վարակեց նոյնիսկ հեռաւոր ու խուլ մեր մայրաքաղաքը Երեւանը, ուր ունինք արդէն սկաուտական կազմակերպութիւն պետական լայն օժանդակութիւնով և սրտարուխ քաջայերանքով, առիթներ միշտ պիտի ունենանք տեղեկացնելու այդ նոր շարժման զարգացման ընթացքը, և նոյն իսկ այդ կերպով ստեղծելու յարաբերութեան սեղմ կապ մը, և հետեւ արար թանկագին սրտակցութիւն մը հեռաւոր գաղափարակիցներու միջեւ:

Մարգարէի ուսուցիչ  
ԵՋՆԻԿ ԿՍՋՈՒՆԻ

Երեւան 21 Դեկտ. 919

### ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼԸ

Այսօրոնի ազգային խաղը Հայաստանի մէջ... Հայկական ֆուտբոլ. կա՛յ արդեօք, ո՛րն է այդ խաղը:

Հայը շատ բան ունի, բայց իր գանձերուն մօտեցած չենք: Գանձարանը չճանչնալնու՝ բանալին ալ ժանգոտեր, մամռեր է:

Բանանք անգամ մը, հայ անգիրներուն

փոշոտ դուռն իր ծխնինքուն վրայ դարձնենք, ու տեսնենք՝ խաղի խորշ մը կա՛յ հոն, - դարերու քոս կապած Հայ Դիւանին մէջ:

«Հայ Սկսուտ»ի դեռարաց Լջերուն վրայ՝ ֆուտբոլի խաղն իր որոշ տեղը գրաւած է և խաղավայրին յատակաշիծն ալ դրուած:

Այնքը կը խաղան ֆուտբոլը, կը հասնին ու կը յանձնարարեն: «Նորոյթ է՝ անձր համար» ըստի թերեւս: «Օտար խաղ է, և օտարին ունեցածը միշտ գերազանց է» այլասէլ: Հայերուս աչքին:

Ես կ'ըսեմ նորոյթ չէ ֆուտբոլը, և միայն բրիտանական ճայրոտ երկնից տակ չէ որ խաղցուած է ու կը խաղցուի այդ սքանչելի վաղխաղը:

Հայ աստղերու ծերունի կամարին տակ ալ, ո՛վ գիտէ քանի՛ դարերէ ի վեր, հայ պատանի խաղակը թոցուցեր է իր կարչնեղ ոտքովը միւնոյն խաղանիւթը, և իր ազգային բնիկ վանկերովը կազմեր է խաղին անունը՝ հայացի, հմտօրէն:

Խաղին չէ՛ ֆուտբոլի ֆանի՛ մը տեսակ խաղերուն ծանօթ է հայ խաղաչխարհը:

Ոչ դարեր առաջ անգլիացին Հայ Լեռներ կիրը ոտք կոխած է, ոչ ալ հաւանաբար հայ մը Բրիտանեան Կղզիներէն ներս ցամաք ելած է: Բայց ահա խաղին ձեւն ու ոգին ծանօթ կը տեսնենք հեռաւոր Հիւսիսի ու մերձաւոր Արեւելքի մէջ:

Անգլիական ֆուտբոլը հանրածանօթ է: Իսկ ո՛րն է, կամ որո՞նք են հայկականները:

Երեք խաղեր ունինք ֆուտբոլին համազօր, Աւելոցիկ, Բոյնով Խըռ և Կսրոց: Պիտի կրնայի ըսել Նաև Կրակսարոցիկը:

Ֆուտբոլին մէջ խաղին նիւթն է գնեսակ մը. խաղաձեւը՝ ոսֆով թոցնել գնդակը: Արդէն անգլերէն foot-ball՝ կը նշանակէ ոսկազնակ: Խաղին ոգին կը կայանայ գնդակը ոտքի հարուածով մէկ խուժքէն մէկալ խուժքին կողմը թոցնել-փոխադրելուն մէջ:

Աւելոցիկ հայկական խաղը՝ իր նիւթովը, Բոյնով Խըռը իր ձեւովը, իսկ Կսրոցը իր ոգիով ու ձեւովը կը կազմեն բնիկ Հայկական ֆուտբոլը կամ ֆուտբոլները:

Մեր ինքնիրմէջ ամիսփուած, քաղաքակրթութեան շնորհներէն բանազուրկ հայրենիքին կանաչ մարգերուն վրայ, բնիկ հայ խաղակը, ինքնարոյս ծաղկի մը պէս արեւին ու անձրեւին մնացած, ինքնատիպ գոյն ու հոտ ժառանգած է Բնութենէն:



Ուրկէ՞ պիտի գտնէր հայ տղան՝ կաշիէ կարած, օղով լեցած, շիֆ գնդակ մը: Բնութեան հայթայթած մէկ պարզ առարկան պէտք էր գրաւեր իր ուշն ու արուեստագէտ մասնները:

Եւ ահա աւելը. մացառի ճիւղերէ կապած պրկած ու մաշած, կնա՛ճ աւել մը. — իր գընդակը՝ ոսֆով թռցուելիք գնդակը — foot-ball:

Աւելոցիկ խաղը կը նշանակէ աւելով խաղցուելիք խաղ: (Բացէք մեր «Արեւելեան Խաղաչխարն» կամ «Հայկական Խաղերն ու Ժամանցներ» երկհատոր գործը՝ ու պիտի գտնէք խաղն ու իր լեզուական կազմութիւնը):

Եթէ հոն Աւելոցիկը ֆութպօլի կարգ ու կանոնը չունի, աւելի պարզ ու անտաշ ձևով մը կը խաղցուի հայ մարզերու վրայ, բայց ֆութպօլ մ'ըլլալէ չի դադրիր:

Կը թուի թէ նախնական առաջին ձևէն՝ Աւելոցիկէն՝ խաղն անցեր է երկրորդ աւելի կիրթ ու կանոնիկ ձևի մը, — Բողֆով խըր:

Հոս արդէն զարգացած է խաղը: Երկու ճակատ կայ՝ երկու խումբերու համար: Պաշտպանողական կողմը կը կոչուի ներս. յարձակողական ճակատը՝ դուրս: Եթէ ոտնագնդակը կը պակսի հոս, փոխարէն կայ սակայն Բողֆը զոր կը պաշտպանեն ներսիները ոսֆով, իսկ զրաւելու կը ճգնին դուրսիներ՝ նոյնպէս ոտքով:

Ներսը, դուրսը, ֆողֆը, ոսֆը ղեկավարող մ'ունի՝ որ ամէն մէկ խաղորդին իր խելքն ու ուշն է, ճիշդ ֆութպօլի պահանջներուն նման:

Զարմանալի նման ձայն կազմութիւն մը, եթէ դիտեցիք հայերէն ֆողֆ ու անգլիներէն կող խաղաբառերուն մէջ: Հայ ֆողֆը՝ թերեւս ազաւաղ ձեւն է ֆաղաֆ բառին. իսկ թէ ինչ կը նշանակէ անգլ. կող բառը՝ հմտութեան կը թողունք մեկնել: Գորուրիսին դէմ մենք ունինք մեր կրակ-ձանդող, եւ ին. եւ ին.:

Երրորդ, աւելի աճած զարգացած, ձեւն է՝ անկասկած՝ Կտրոցը:

Երկու խումբի բաժնուած, դէմ-դէմի որոշ հեռաւորութեան վրայ, ներս, դուրս, և ֆողֆ՝ պայման են: Փնդակ չկայ, բայց ոսֆն իր կեդրոնական տիրող դերն ունի խաղին մէջ: Յարձակողական-պաշտպանողական ճիւղերուն մէջ՝ խելք, ուշիմութիւն, արթնութիւն, ճկունունութիւն, հաշիւ ու հեռատեսութիւն կ'ուզէ: Մէկ ֆողֆ գրաւելը՝ մէկ խաղ շահիլ կը նշանակէ:

Եթէ խորը մտնենք՝ աւելի ինքնատիպ երանգներ ալ ունի Կտրոցը: Խաղավայրին ընդարձակութեան համեմատ կը խաղցուի Սահմանով Կտրոց կամ Անասիանակ Կտրոց:

Ինչո՞ւ չէ, «Սահման քաջաց՝ դէնն իւր եանց» կ'ըսէին մեր քաջագէն նախնիք: Հիմա ալ մեր խաղագէտ պատանիները «Սահման քաջաց՝ սրունն իւրեանց» կ'ըսեն ճահարար:

Ահա, խոշոր գիծերու մէջ, հայկական ֆութպօլները, որք մշակուելով և աւելի ազնուական ձևերով երբ կիրարկուին հայ խաղավայրերու վրայ, նուազ հաճոյքով չպիտի փնտուրին մեր նորահաս խաղակներուն կողմէ, ու մասնաւոր պարծանքով պիտի կրնանք ըսել «Հայն ալ ունի իր ազգային իսկատիպ ֆութպօլը»:

Թող միայն այդ ըլլար մեր շունեցածը...

Անդին երկարիւրեակ մը խաղեր ունինք Հայ խաղաչխարի բնիկ բեմին վրայ, հարուստ, գունագեղ, մանրանկարչային, — ես պիտի ըսեմ, խորունկ գիտակցութիւնով, Եւրոպ-ամերիկեան ու եւ ազգի նախանձը շարժելու չափ հնարարական ու գրաւիչ:

ԳԻԹՈՒՆԻ

### ԻՆՉՊԷՍ ՎԱԶՈՂ ԵՂԱՅ

Վազող մը ըլլալու պարագայ պատմել պիտի նշանակէ ընել ակամայ ինքնակենսագրութիւն մը, որ ինձ համար լի է դառն յիշատակներով:

Սկսելէ առաջ, շեշտեմ թէ՛ վազող մը ըլլալու բուն պատճառը հօրս լրագրավաճառ ըլլալն է: Եթէ տարեկ սնէս, երբ դեռ նոր սկսած էի մարդու հովեր տանել ու ապագայիս մտահոգութիւններով շարշարուիլ, Գուրուչէյմէի ազգային վարժարանի ծաղկոցէն երբեմն փախչողս, սկսած էի արդէն հօրս օգնել, առաւօտները Պէպէքի նաւամատոյցը լրագիր ծախելով: Յաճախ ստիպուած էի 100ի չափ խոշոր թերթերով լրագիրներ Առնավուտգիւղէն Պէպէք վազելով շոգենաւին հասցնել... ձեռքիներս ինձ էէ մեծ էին. երբեմն չմտելու համար լրագիրներու մէջ կը պահուրտէի! ձմեռ օր մը՝ Արնատգիւղի հոսանքի ցուրտէն ստաած, հոնկէ անցնող բեռնակիր մը լրագիրներու մէջ փաթթելով զիս բախիթի նման յանձնած էր տաք սրճարանի մը տիրոջ... Ատկէ վերջ դեռ շատ վազեցի... Ժամ առաջ դպրոց երթալով, դասատուիս խոժոռ նայուածքներէն զերծ մնալու համար: Բարի մարդ, թէև կ'ուզէր որ թի-



ճարհեղձով ևս պարապէի, սակայն ինձ պէտք ունէր իբր «կառավարիչ», պաշտօն մը որ ամբողջ տարեկան թուղթի պաշարս ձրիօրէն կ'ապահովեր. . . յանցաւոր եղողը շերտ մը թուղթով բոլորովին անմեղ կը հանէի: Այն ատենները թուղթը այսօրուան ոսկիին ոյժը ունէր. . . գէթ ինձ համար:

Ինը տարի Պէպէքէն Գուրուչէյմէի ազգային վարժարանը. գացած ու եկած եւ. առաւօտները միշտ կը վազէի, իսկ երեկոյնները յոյն տղոց դէմ քար. . . նետելու փորձեր կ'ընէի. . . Տասը տարեկանիս Արնաուտգիւղի յոյն մարմնամարզական Արիս խումբին անդամագրուեցայ: Ձիս իբր լաւ վազող մը նկատած էին ու կուզէին զիս իլեկց հետ ունենալ: Տասը տարեկանս մղոն վազել սկսայ. կէս մղոն ալ փորձեցի ու երկուքին մէջ ալ երկրորդ ելայ: Որքան կ'ուրախանային որ հայ մը կը պարտուէր, հակառակ որ նորեկ մըն էի. օր մը բնկերներով լեռ ելած էինք ելակ գողնալու! համար ինչո՞ւ սուտ ըսեմ, այդ օրը գործերնիս յաջող գացած էր. կուշտ ու կուռ և արիւննիս. . . գտուած. անցանք մարմնամարզարանին քովէն. զիս փորձի հրաւիրեցին. բաւական բազմութիւն մը կար այդ օրը, թաթապակէն ալ եկողներ կային, թէ այդ և թէ՛ կին. . . : Շիտակը ըսելով չուզեցի հրաւերնին մերժել, արամադրութիւնս լաւ էր. թերեւս հակառակորդէս անցնէի: Քիչ մը վերջը կէս մղոն վազեցինք. շատ կերած էի, ելակները թթու իլ սխսան, այդ օրուան քրտանաթաթախ վաստակս. . . զիս մատնել սկսաւ. . . բայց չյուսահատեցայ. հանդեսատենները կը ծափահարէին ինձմէ անցնող յոյն պարոնը. ճիգ մը ըրի ու անցայ. ծափերը դադարեցան ու այդ երանելի լուսթեան մէջ կեանքիս մէջ առաջին անգամը ըլլալով կէս մղոնի մէջ առաջին ելայ: Մինչև այսօր մասնակցած մրցումներուս մէջ միշտ կէս մղոնի առաջնութիւնը չահած եմ այդ օրէն ասդին:

Մղոնի առաջնութիւն չահելուս պարագան ալ աւելի ունանքիկ է: Պէքոզ բարդիբի մը առթիւ արուած դաշտային հանդէսի մը մէջ վազեցի յոյն մրցակցիս հետ ու 30 մէթր անցնելով առաջին ելայ, հակառակ որ ստամոքս լաւ մը լեցնելէս վերջ, ինձ վազընել տուին. այդ օրը ինչ աղուոր գառնուկ մը խորոված էին. . . , գեանախնձորները կաս կարմիր. . . , ջուրը արիւնոտ ու ճարպոտ. . . , կերայ ու կերայ. . . , ևս ալ տասը զրուշ տուած էի. . . , բայց երբ կարգը մարսելու եկաւ, հիմայ պիտի

վազենք. ըսաւ խելացի յոյն մրցակցիցս, որուն փորը այդ ատեն այնքան անօթի էր, որքան իմս՝ վազելի վերջ! : Տասնև մէկ տարեկանէս ասդին մասնակցած մղոնի մրցումներու մէջ միշտ առաջին եմ ելած:

Եղբայրս լաւ վազող մը ըլլալս չէր գիտեր, յոյներու հետ փորձ ընելու չ'էի ըսեր. կը բարկանար. գէշ տղոց հետ պտտելու չէր ուզեր: Օրին մէկը պատահեցաւ որ ինքը Յունաստանի Ողիմպիական խաղերու իբր Գոլէճէն ներկայացուցիչ Աթէնք պիտի երթար. նախնական փորձերը ինձի հետ ընել սկսաւ. ամէնէն առաջ չ'ուզեցի հետը վազել. զմեկի մը նուիրել խոստացաւ մեր պարտէզին մէջ իրմէ անցնելուս պարագային. . . : Մէկ չրջան «աւանս» ուզեցի. տուաւ ու իրմէ անցայ: Այդ օրէն վերջ երկուամիւսի չափ իրեն հետ երեկոյնները փորձ կ'ընէինք. ինքը մղոնը 5վ 15երկ. կ'առնէր ևս 5վ. 35երկ էն: Ոյժ առի ու սկսայ գլուխ բարձրացնել. , ինքզինքս բարձրէն ծախեցի. . . նուէրներ ուզեցի չտուաւ ու այդ օրուրնէ վերջ ալ չըվազեցի. երկու տարի ծոմապահ՝ մնացի մինչև 1907:

1907ին Ռ. Գոլէճի ուսանող արձանագրուեցայ: Վարժարանի տարեկան պիւտճէս ստիպուած էի անհատական միջոցներով ապահովել. վերստին արհեստ ի գործ դրի: Գոլէճի բարեկամներէս մէկէն 150 զրշ ի փոխարէն հեծելանիւ մը գնեցի. կառքի մը չափ ազմկարար ու հին մեքենայ մը. . . : Քանի մը օրէն Պէպէքի պարտէզի ծառերը մէկիկ մէկիկ համբուլէն վերջ վար չ'իյնալու չսփի հեծնել սորվեցայ: Ծրագրիս մէջ յաջողած էի, առաւօտները Պապը Ալիէն պիտի կրթայի լրագիրները առնէի ու հեծելանիւով վերին Վսփոր պիտի փոխադրէի. առաջի փորձս յաջող անցաւ. արշալոյսի հետ, երբ դեռ բաղդաւոր մարդիկ մշիկ մշիկ կը քնանային, լրագիրը պատրաստ կ'սպասէր իրենց դռան առջև: Երկրորդ օրը լրագրավաճառներուն մէջ յուզմունք ու զարթացում յառաջ բերաւ իմ նորութիւնս: Գամբով, շիշերով ետեւէս կը վազէին «շամպոն տէր»ները ծակելու յոյսով: Երբէք չըլլալողեցան, ընդհակառակը հեծելանաւորդ մը ըլլալու լաւ առիթ մը տուին, մինչև Պէշիկթաշ զիս հալածելով. անկեց անդին. . . ջուրերը հանդարտ էին. . . :

Հեծելանիւով մինչև Պէպէք կ'երթայի, օր կ'ըլլար որ 1000 հատ է աւելի թերթ փոխադրեմ կունակիս վրայ: Օր մը ուշ մնացած էի. 22 վայրկեանէն Գարագիւղէն Պէպէքի պարտէզը



գացած եմ: Յետոյ Պէպէքէն մինչև Թարապիա կը վազէի, ճամբան թերթ ծախելով, Թարապիա կը բռնէի վերէն իջնող առաջին շոգենաւը, մեծ մասամբ օդափոխութեան եկող հայ «չարչըր»- ներով լեցուն: Ի՞նչ լաւ ընդունելութիւն ցոյց կուտային ինձ... դիս մինչև այս օրս շնորհապարտ թողած եմ. ինձ օգնելու փորձ կ'ընէին... կարդալ չգիտցողն ալ թերթ մը կ'առնէր. գիտէին թէ ինչ նպատակաւ թերթ կը ծախէի, արդէն եթէ ատոնք չ'ըլլային. շոգենաւէն ներս մտնել կարելի չ'էր ինձ համար, նաւապետը զիս չ'էր ուզէր, «ժողովուրդը գլուխը ժողուելով, շոգենաւը մէկ կողմ կը ձուլուցնէ» կը պոռար... Բայց ճիտ չէի ծուր և կարգի բերի նաւապետը, որ երբեմն շոգենաւը կ'սպասցնէր, եթէ քիչ մը ուշացած ըլլայի...:

Ենչիգիւղ շոգենաւէն դուրս կ'ելլէի ու վերստին Թարապիա կը վազէի, մէկ մղոնէ աւելի հեռաւորութիւն մը կար. հակառակ յոգնած ըլլալուս, աւելի արագ կը վազէի այս անգամ, քանի որ ձեռքիս բռնը թեթեւացած էր. Թարապիա երկրորդ շոգենաւին կը հասնէի. հոն կ'սպասէի թերթերս ու վերջկուտայի գործիս Այսպէս շարունակեցի գրեթէ 6 տարի. մինչև որ գոյճական շրջանս աւարտեցի: Հիսարէն Պէպէք վազելով շոգենաւին հետ մրցել շատ դիւրին բան մըն էր այն ատենները ինձ: Իրժ բաղասար Գոյէճի մէջ չ'ունէի մրցակից մը որ կարենայի լաւ յրգօր մը չինել. երկրորդ հանդիսացողները մէկ քանի հարիւր մէթր ետեւէս կուգային: Լաւագոյն վազքը Սթօքհօլմի մէջ կատարած եմ... կէս մղոնի մէջ աւելի յարմարութիւն ունենալով, բաւական ծափերու արժանացայ... ձրիօրէն... Եթէր հոգի ճամբայ ելլանք: Ես քիչ մը ուշ մնացի. սակայն խոյանքով մը 60 մէթր վազելէ վերջ, ամէնէն ալ անցայ, ինձմէ վերջ կուգար Ամերիկացի մը, յետոյ Շուէտի յրգօր (1 55<sup>3</sup>/<sub>6</sub>) բռնողը, Մաճառ մը, Ռուս մը և այլն. 300 մէթր վազելէս վերջ, 25 մէթրի չափ առջեւէն կ'երթայի. 100,000ի չափ բազմութիւն մը զիս կը ծափահարէր. արտասովոր Հնդիկի մը տեղը դրին զիս, վերջապէս յուզուած ինքզինքէս ելայ ու հազիւ 100 մէթր մնացած էր լմնալու, անզգայ ինկայ գետին ու ինձմէ անցան... Ռաքիս ջիղերէն մին զիս կի նեղէր. Գոյէճը երկայնութիւն ցատկած միջոցիս շահուած ցաւ մըն էր. հինգ օրուան անքունութիւնս մէջտեղ հանած էր, ու առանց «մասած» մը ընելու ստիպուած էի այդ վիճակով մասնակցել մրցման: Եթէ այդ օրը

նոյնիսկ առաջին չ'ելլէի, հաւանական էր որ կէս մղոնը 2էն պակաս առնէի: Այդ թուականէն առդին՝ 1912, սկսայ ծերանալ, «վէսիգա»ի հացն ալ եկաւ պակասը լրացուց ու ծուլութիւնը և յարմար վայրի մը պակասը միւս կողմէ ինձ ստիպեցին որ վազելու տեղ լողալու փորձեր ընեմ... թէև հեծեկանիւ մը ունենայի իրայօժար բազդս պիտի ուզէի փորձել անոր վրայ ես! ! !:

Հակառակ այս ամէնուն մինչև ծերութեանս օրը զիս պիտի տեսնէք Հայաստանի մարզադաշտերուն մէջ, գէթ տարին անգամ մը, ու անշուշտ այս տարուան պէս ճերմակ մաղբերուս՝ վրայ խնդացող հանդիսատեսներ պիտի ուզեն ուղղել իրենց սխալը... հայրեր պէտք է ապրին զաւակներու լոյս տալու համար չէ՞:

Վ. Ս. ՓՍՓԱԶԵԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԱՏԱԲԱՅԱՐԻ ՄԷՋ

17 Յունուար 920


Ատաբազար ներկայիս ունի չորս վարժարաններ: Շուէտական մարզանքը, իւրաքանչիւր դպրոց ընտրուած է իբրեւանհրաժեշտ եւ կարեւոր դաս, եւ այս տարեշրջանի սկիզբէն իսկ սկսուած է կանոնաւոր դասաւանդութիւն: Մարզանքը տեղի կ'ունենայ շուէտական դրութեամբ իսկ շաբթուան մէջ որոշ օրեր կ'ըլլան ֆուլպօլի եւ դաշտային խաղերու փորձեր: Ուրախաւիթ է որ ոչ միայն պատանեկութիւնը խանդավառութեամբ փարած է գործին ալ նաև ընդհանրապէս դպրոցավար մարմիններուն քով ալ կը տեսնուի մասնաւոր հետաքրքրութիւն մը դէպի մարմնակրթանքը: Այսպէս ամերիկեան վարժարանի տնօրէնուհին, Միս Քիլի իր համակրելի պաշտօնակցին Պ. Յ. Ալիքումեանի հետ առաջիններէն եղած է Սկաուտական եւ մարմնակրթական շաբթուր բաջալերել: Այսպէս որակով եւ քանակով լաւագոյն տարրը կը կազմեն Ազգային եւ Ամերիկեան վարժարաններու աշակերտութիւնը: Պէտք է խոստովանիլ սակայն որ Հ. Մ. Ը Մ. Ի Ատաբազարի մասնաճիւղը ինք եղաւ է առաջին անգամ նախաձեռնարկ մարզանքը դպրոցներէն ներս մտցնելուն: Իւրաքանչիւր դպրոց, բացի բողոքականաց վարժարանին, ունի իր մասնաւոր սկաուտական խումբը, որոնք հաւաքաբար կը պատկանին Հ. Մ. Ը Մ. Ի տեղոյն մասնաճիւղին: Յոյս ունինք որ յառաջիկայ տարի Ողիմպիական մրցումներոյն Ատաբազարը աւելի մեծ թիւով ներկայացուցիչներ եւ մրցողներ պիտի ունենայ:

Հ. Մ. Ը Մ. Ի տեղոյն մասնաճիւղը իր անդամներուն մտաւոր եւ բարոյական զարգացման հոմար որոշած ըլլալով պարբերաբար ընկերական հաւաքոյթներ սարքել, երկրորդ հաւաքոյթս տեղի ունեցած է ամսոյս 15ին կիրակի իրիկուն, Գարմիր Խային Թատերասրահին մէջ, Հաւաքոյթը անցաւ շատ հասելի անդամները նուագով, երգով եւ արտասանութեամբ իրենց մասնակցութիւնը բերածին հաւաքոյթին:

ՔԱԶԱԶԱՏ



# Հ. Մ. Ը. Մ. ՏԱՐԵԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ



31 Օգոստոս 1919. Կիրակի, ժամը 2ին, Գասը-Գիւղ «Իւնիօն-Բլիւպ»

## ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

### ՏԵՐ ՉԱՐԷՆ Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀՈՐ




1. (\*) Հարիւր մէքր վազք. մրցանիշը կոսրած. — (Մրցանիշ 12<sup>2</sup>/<sub>5</sub> երկվ. 1913. Գէրրգ Յարէթեան. Իզմիր): 1. (\*\*\*) Նուպար Արապեան. Բերա, 12<sup>1</sup>/<sub>5</sub> երկվ. 2. Սարգիս Սիմօնեան՝ Բերա, 3. Աւետիս Է՛րրգ՝եան՝ Սիլեւոսր:

Գատըգիւղ 12,12 մէթր, 2. Վարազ Փողարեան՝ Վոսփոր, 3. Վրոյր Արծրունի՝ Վոսփոր: 3. (\*) Բարձրութիւն ցաւկել, ուժով. — (Մրցանիշ 1,70 մէթր. 1912. Բիւզանդ Կէօզի պէօյիւրեան Բերա). — 1. Գառլօ Շահին:



ԱՐԱՄ ԱՐԷԼԵԱՆ  
Ա. Շահին



ՎԱՐԱԿ ՓՈՂԱՐԵԱՆ  
Բ. Շահին

2. Մ. Ը. Մ. Գատըգիւղի Մասնաճիւղէն երեք զաւակներու տէր աթլէթ ֆուդպօլիստը:

եան՝ Բրօթի 1,51<sup>1</sup>/<sub>2</sub> մէթր, 2. Գրիգոր Գրիգորեան՝ Գուճգարու, 3. Գրիգոր Ճօլօլեան՝ Բերա:

4. Վազք 800 մէքր. — (Մրցանիշ 2,11<sup>1</sup>/<sub>5</sub> վայրկ. 1914. Ս. Սամուէլեան Վոսփոր). —

1. Չարմայր Դերձակեան՝ Բերա. 2, 13<sup>4</sup>/<sub>5</sub> վրկ., 2. Արամ Պօպեան՝ Վոսփոր, 3. Էմիլ Սարաֆեան՝ Բերա:

5. Սկաւառակ նետել. մրցանիշը կոսրած. — (Մրցանիշ 32,25 մէթր. 1912. Բիւզանդ Կէօզի պէօյիւրեան, Բերա). — 1. Արամ Արեղեան՝

2. Մ. Ը. Մ. Գատըգիւղի Մասնաճիւղէն և լաւագոյն ապագայ խոստացող աթլէթը:

2. Երկար նետել. մրցանիշը կոսրած. — (Մրցանիշ 12,06 մէթր. 1914. Սարգիս Թարիգեան, Ատարազար). 1. Արամ Արեղեան

(\*) 100 մէթր վազքի ատեն մրցորդներուն մեկնուածի ճակատէն աւելի ներկ կարգադրուած ըլլալով հասնելու գիծը, և Ս. Սիմօնեան ալ վազած ըլլալով ամենէն դուրսի կողմէն կոր գիծով մը յառաջանալով ամէն պարագայի մէջ 100 մէթրէն աւելի վազած ըլլալը կը հաստատէ:

(\*\*) Անունները շեղագիր գրուած պարօններուն նշկարները դրած ենք այս թիւով:

(\*) Շահինեան և Գրիգորեան հաւասար բարձրութիւն ցատկած ըլլալով՝ քուէով առաջնութիւնը Շահինեանի կը վիճակի:





Հ. Մ. Ը. Մ. Բերայի Մասնանիւղեն

1. ԳԱՐԻԷԼ ՔԷՆԵՆՆԱՆ. — Երիտասարդ օթլէթ ՚ը որ աստղայ կը խոստանայ, կս փախարտի սիրահար:
2. ՆՈՒՊԱՐ ԱՐԱՊԵԱՆ. — Պոլսոյ լաւագոյն արագութիւն վազողներէն կրտսերագոյնը:
3. ԳՐԻԴՈՐ ՃՕԼՕԼԻԱՆ. — Նախկին Բերայի սկաուտ խմբապետ, այժմ Ատարաղարի մէջ մարզանքի ուսուցիչ:



ԳԱՌԼՕ ՇԱՀԻՆԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Հայ Կղզիի մասնաճիւղէն (Թերթիս արտօնատէր):



ՎԱՀՐԱՄ Ս. ՓՈՓԱԶԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Վոսբորի Մասնաճիւղէն և Թերթիս ժրաջան ու սրբամիտ աշխատակիցը:



ԶԱՐՄԱՅՐ ԴԵՐՉՈԿԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Բերայի Մասնաճիւղէն Պոլսոյ ֆուդպօլի թիմին լաւագոյն ուժերէն մէկը:



Գատրչիզ 35,87 մէթր, 2. Պերճ Սէմիգեան՝ Ատարազար, 3. Վրոյր Արծրունի՝ Վուփոր:



ԱՐԱՄ ՆԱԶԱՐԵԱՆ

Միեւնոյն ատեն սկառու ի մրապետ Հ. Մ. Ը. Մ. Վոսթրի Մասնաճիւղին:

Գիւզ 2 92 մէթր 2. Օւնիկ Ա. ետիսեան՝ Բերս, 3. Ս. Սոն Կաստիկեան՝ Պալթալիման:

7. Նիզակ նետել (Ագաս ձեւ). մրցանիշը կոսրած. — (Մրցանիշ 41,16 մէթր. 1912, Մարտիրոս Գույումճեան, Վոսփոր). — 1. Վարազ Փողարեան՝ Վոսփոր, 44,45 մէթր, Վրոյր Արծրունի՝ Վոսփոր, 3. Եղուարդ Մաչատուրեան՝ Գատրչիզ:

8(\*) կեցած բարձրութիւն ցաւկել մրցանիշը կոսրած. — (Մրցանիշ 1,25 մէթր, 1914, Գառլօ Շահինեան, Սկիւտար) — 1. Գաբրիէլ Քէշիշեան՝ Բերս մէթր 1,26 1/2, 2. Յովհաննէս Սէֆէրեան՝ Գատրչիզ, 3. Գառլօ Շահինեան՝ Բրօթի:

9. Վազ 400 մեքր. Մրցանիշը կոսրած. — Մրցանիշ 59 երկ. 1914 Յաւակ Նազարեան՝ Սկիւտար: 1. Գրիգոր Ժօղեան՝ Բերս, 58 1/5 երկվ. — 2. Արամ Պապահան՝ Վոսփոր, 3. Աւետիս Էմիրզեան՝ Սկիւտար:

10(\*\*) երեք քայլ ցաւկել. (Մրցանիշ 12,50

մէթր. 1912 Մատթիոս Զարիֆեան՝ Սկիւտար, 1. Արամ Նազարեան՝ Վոսփոր, մէթր 12,11, 2. Գաբրիէլ Քէշիշեան՝ Բերս, 3. Տիգրան Խոյեան՝ Բրօթի:

11. Երկայնութիւն ցաւկել ուժով. — (Մրցանիշ 5,94 մէթր. 1913 Դէորթ Յափէթեան Իզմիր): 1. Սարգիս Սիւսունեան՝ Բերս, (մէթր 5,67 1/2), 2. Տիգրան Խոյեան՝ Բրօթի, 3. Սուրէն Անդրէասեան՝ Սկիւտար:

12. Չողով բարձր ցաւկել. — (Մրցանիշ 3 08 մէթր. 1912 Մարտիրոս Գույումճեան՝ Վոսփոր): 1. Միհրդատ Սերոբեան՝ Վոսփոր, (մէթր 2,55 1/2), 2. Հայկ Պաղճեան՝ Վոսփոր, 3. Գեղամ Եւայեան՝ Սոսիսթիա:

13. Քար նետել. — (Նախընթաց չունի). 1. Վարազ Փողարեան՝ Վոսփոր, (մէթր 15,50), 2. Գաբրիէլ Քէշիշեան՝ Բերս, 3. Կարգիս Ասլանեան՝ Գատր-Գիւզ:

14. Վազ 1500 մեքր. — (Մրցանիշ 1609 մէթր 4,59 2/5 վայրկ. 1911. Վահրամ Փափազեան՝ Վոսփոր). 1. Վահրամ Փափազեան՝ Վոսփոր, (վայրկ. 4,53 երկվ.) 2. Էմիլ Սարաֆեան՝ Բերս, 3. Հայկազուն Աբէլեան՝ Մազր-Գիւզ:

15. Հեծանիւ 5000 մեքր. Մրցանիշը կոսրած. — (Մրցանիշ 10 վայրկ. 1913, Վաղար-



ԱՇՈՏ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ Բերայի Մասնաճիւղէն և Պօլսոյ պիսիկէթի Շաքիոն:


չակ Վարժապետեան՝ Սկիւտար). 1. Աշոտ Մամիկոնեան՝ Բերս, (վայրկ. 9,29 1/5 երկվ.), 2. Վ. Նորհատեան՝ Վոսփոր, 3. Որդիք Գափամաճեան՝ Վոսփոր:

16. Վազ 3000 մեքր. — (Նախընթաց

(\*) Սէֆէրեան և Շահինեան կեցած բարձրութիւն հաւասար ցատկած ըստով քուէով երեքորդը՝ Սէֆէրեանի և երրորդը Շահինեանի կը վիճակի:

(\*\*) Նազարեան և Քէշիշեան երեք քայլ հաւասար կը ցատկեն և քուէով առաջնութիւնը Նազարեանի կը վիճակի:





ՍԱՐԳԻՍ ՍԻՄՕՆԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Բերայի Մասնաճիւղէն Շուէտական մարզանքի պետ:

չունի). 1. Չարնայր Դերձակեան՝ Բերա. (վրկ. 10,58<sup>3</sup>/<sub>5</sub> երկվ.). 2. Արամ Կիւլպէնկեան՝ Գառը-Գիւղ, 3. Յովհաննէս Նաւասարդեան՝ Վոսփոր:

17. Բրօշաւու 400 մէքր. — (Կը շահի Բերայի մասնաճիւղը), (երկվ. 51<sup>2</sup>/<sub>5</sub>) Գրիգոր Ճօլօլեան, Սարգիս Սիմօնեան, Գափրիէլ Քէչիշեան, Նուպար Արապեան, Ճաւնակցելով իւրաքանչիւրը 100 մէթր վազած:

Հ. Մ. Ը. Մ. Տարեկան Ա. Ողիմպիական խաղերուն (31. Օգոստ. 919) արդիւնքը խըղ-



ԱՆԴՐԱՆԻԿ ՓԷՂԻՎԱՆԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Դուրդարուի Մասնաճիւղէն 1 $\frac{1}{2}$  տարեկան սկաւառ, որ 1500 մէթր լողալու մէջ երրորդ ելաւ:

ճամփա քննութեամբ հաստատուած է ճշգրիտ ճանրամասնութեամբ գրի առնուած ըլլալուն կը վկայենք 31 Օգոստ. 919:

- Հաշարար Դասաւոր
- Բ. Կեօղիւպօյիկեան
- Ճամբայ Հանոյ
- Գրիգոր Յակոբեան
- Դասաւորներ
- Ա. Գալանօղեան
- Ա. Սալմասլեան
- Շնորհի
- Ս. Մկրեան
- Գ. Մանուկեան
- Ն. Ճեկալեան
- Լ. Յակոբեան (ժամ բռնոյ)
- Ժ. Խորասանեան » » Եւ յայտարարող)
- Արձանագրող
- Հ. Ճիգմեան



ՄԻՀՐԴԱՏ ՍԵՐԱՐԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Վոսթրի Մասնաճիւղէն:

Հ. Մ. Ը. Մ. ՏԱԼԵԿԱՆ Ա. ԾՈՎԱՅԻՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

17. ՕԳՈՍՏՈՍ 1919 ԿԻՐԱԿԻ ԺԱՄԸ 10 $\frac{1}{2}$ ԻՆ

Հ Ա Յ - Կ Դ Զ Ի

1. Լողալ 1500 մէքր. — 1. Վահրամ Փափագեան՝ Վոսփոր, (վրկ. 37,52 երկվ.). 2. Հրանտ Արշալիր՝ Մգր-Գիւղ, 3. Անդրանիկ Փեհիյիվանեան՝ Գուժ-Գարու:





ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

14 տարեկան սկսուած 2. Մ. Ը. Մ. Գատրգիւզի Մասնաճիւղէն որ այս տարիքին մէջ լաւ լուրդող մըն է և ապագայ կը խոստանայ:

2. Լողալ 500 մէքր. — 1. Յովսէփի Տաւրանեան՝ Քրօթի (վրկ. 11.30 երկվ.). 2. Վահրամ Արշախի՝ Մագր-Գիւղ. 3. Եղուարդ Քաչատուրեան՝ Գատր-Գիւղ:

3. Լողալ 100 մէքր. — 1. Յարութիւն Յովսէփեան՝ Գատր-Գիւղ. (վրկ. 2.52 երկվ.). 2. Ներսէս Սերոբեան՝ Վոսփօր. 3. Հրանտ Արշախի՝ Մագր-Գիւղ:

2. Մ. Ը. Մ. տարեկան Ա. լողալու մըքրումները (17 Օգոստ. 919) տեղի ունեցած են Հիւսիսային բուցառիկ փոթորկոտ ծովու մը վրայ. դատաւորներ ստիպուած են՝ մըքրումները յետաձգելու իրենց առաջարկին մէջ տեղի տալ. լուրդողներուն յամուտ պնդումին վրայ: Մըքրացավարը հակառակ որ փոխադրուած է Հայկզգիի հարաւակողմը կարելի չէ եւլած սակայն հաստատ կայան մը ապահովել լուրդողները ճամբայ հանելու համար և մասնաւորապէս կարելի չէ եղած հարիւր մեթրի հատար ճիշտ սահման պահել հոսանքներէն միշտ հեռու քըշուելով: Յիշուած պայմաններուն մէջ առնուած արդիւնքներուն ճշգրտորէն արձանագրուած ըլլալը կը հաստատենք. 17 Օգոստ. 919:

Հայտարար դասաւոր  
Գ. Մեհնաճեան  
Ճամբայ հանող  
Վարագ

Դասաւորներ

Ա. Կիւմիւլեան

Ա. Ալլահվերտի

Ա. Արապեան

Ժ. Խորասանեան (ժամ բռնող)


Հ ձիգլեան (ժամ բռնող եւ արձանագրող):

Ե. Խ - Պ. Պ Գրիշոր Բրիգորեանի եւ Յովսէփ Տաւրանեանի նկարները մինչեւ ցարդ չ'ստացանք դժբաղ դարար:



ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

ԱԹԼԷԹԻԿ ՄՐՅՈՒՄՆԵՐ



Շուէտացիք Անվէրսի միջազգային Ողիմպիական խաղերու մէջ յաջողելու նպատակաւ, մեծ ու փութկոտ պատրաստութիւններ կը տեսնեն. շատ հաւանական է որ 1920ին լաւագոյն ոյժերով ի յայտ գան ու այսպէս կը վախճուի որ նոյն իսկ Ամերիկացիներէ աւելի թիւով յաղթանակներ տանին: Ինչպէս կը յիշուի Շուէտացիները Սթոքհոլմի մըքրումներու մէջ, ընդհանուր թիւերու տեսակէտով երկրորդ հանդիսացած էին. իսկ Անգլիացիները՝ երրորդ. անհաւական չէ որ այս տարի Շուէտացիները շահին առաջնութիւնը. որովհետեւ այս վերջինները պատերազմիկ ազգ մը չ'ըլլալով, մարդու քիչ կորուստ ունեցան և բազում տարար լաւագոյն պայմաններու տակ ապրելով, կրցան իրենց մարզանքները շարունակել:

Ստորեւ կուտանք վերջի մըքրումներու մէջ լաւագոյն հանդիսացած Շուէտացի Աթլէթներու անունները. անոնց չափանիշերովը:

Բարձրորիւն ցաւկել — Էքէլսոն, 1.93 (Ալիս օրհի չափանիշն է 2.01մ.) Սվան, 1.86, Թհիլէն 1.86, Հօլմէր, 1.84, Մաթսըն 1.84 Գարրանթիէ, 1.83, Հոկտրոմ, 1.83, Գիւլերշթրանտ, 1.82 և դեռ յատեր:

Երկայնութիւն ցաւկել. — Բէթրըսըն, 7.30 (Ալիսարհի չափանիշն է 7.615մ.) Պլատէն, 7.05, Ապրահամօրն, 6.75, Էրիքսըն, 6.75 Օլսըն, 6.70 և ուրիշներ:

Յողով բարձր ցաւկել. — Հէկտրոմ 3.76, (Ալիսարհի չափանիշն է 4.06) Մաթսըն, 3.75, Ռայտպէրկ, 3.06, Ռիսպէրկ, 3.60, Ֆօրսպէրկ, 3.50 և դեռ ուրիշներ:



Երեւոյ քաղաքի քաղաքացիներու շահերը . — Ճէնարն , 14.71 , Ռընչթրոմ , 14.55 , Պէլքման , 14.25 եւ ուրիշներ :

Ես այսպէս կը կարծեմ թէ՛ վերոյիշեալ արդիւնքները հրատարակութեան սրուած են անգամ մը ևս խաբելու համար . մրցակից ազգութիւնները , անակնկալի բերելու համար Արշիպիկ աշխարհը ճիշտ 1912 ի նման : Արդէն շատ քիչ բան կարելի եղած է լսել Շուէտի մէջ եղած պատրաստութիւններու մասին :

Անգլիոյ մէջ .

Անգլիոյ մէջ մինչև այսօր նմանը չտեսնուած պատրաստութիւններ կը տեսնուին , Անվէրսի մրցումներու մէջ յաջողելու համար : Այսպէս բացուած են Աթլէթիկներու մասնաւոր դասընթացքներ , որ կ'ուսուցցուն զանազան ճիւղերու մասնագիտական պահանջները : Դասընթացքը աւարտելէ վերջ , այս աշխոյժ!! մարզիկները անկողմնակալ ու խիստ քննութենէ մը պիտի անցուին ու միմիայն լաւագոյնները Անվէրս պիտի զրկուին :

Թերևս հետաքրքրութենէ զուրկ չ'ըլլար , եթէ ստորև հրատարակենք կարգ մը չափանիշեր , որուն պէտք է հասնիլ առջին . երկրորդ կամ երրորդ բաժանումի արդիւնք կոչուելու և մրցումներու մասնակցութեան իրաւունքն ունենալու համար :

ԱՐԱԳԱՎԱԶՈՒԹԵԱՆ ՓՈՐՉԵՐ

	100 մէթր	200	440
Լաւագոյններ	9 <sup>4</sup> / <sub>5</sub>	21 <sup>3</sup> / <sub>5</sub>	43 <sup>1</sup> / <sub>2</sub>
Առաջիններ	10"	22"	49"
Երկրորդներ	10 <sup>3</sup> / <sub>4</sub>	23 <sup>3</sup> / <sub>5</sub>	50 <sup>1</sup> / <sub>2</sub>
Երրորդներ	»"	24 <sup>1</sup> / <sub>2</sub>	51"

ՄԻՋԻՆ ՎԱԶՔԵՐ

	Կէս մղոն	Մէկ մղոն
Լ .	1.54"	4.20"
Ա .	1.57"	4.25"
Բ .	1.53"	4.20"
Գ .	2"	4.35"

Մօտ ատենէն մենք ալ մեր պայմանները կը ծանուցանենք , անմիջապէս որ կարենանք մեր մարզասէրներու փորձերու յարմար վայր մը գտնել . . . Աղթամարի վանքին բակը ! :

Ֆրանսայի մէջ .

Ֆրանսա 400 արդիւնք պիտի զրկէ Անվէրս : Կառավարութիւնը 200,000 , իսկ հարուստ ունեւոր անձնաւորութիւն մըն ալ 250000 ֆրանք նուիրած են աթլէթներու նախնական պատրաստութեան համար : Մրցորդները բժշկական հսկողութեան տակ պիտի . . . ան մինչև այդ օրը և իրենց համար որոշուած սնունդէն տարբեր բաներ չպիտի կրնան ուտել :

ՕԴԱՆԱԽՈՐԴՈՒԹԻՒՆ

Անգլիացի նշանաւոր օգտնաւոր Ալքօզ , որ առաջին անգամ ըլլալով Անգլիայէն Ամերիկա կրցած էր սաւառնիլ , յաջթելով Ուլկիանոսներու , մշուշներու և փոթորիկներու , վերջերս անկում մը ունեցաւ Անգլիոյ մէջ , պարտէզի մը վրայէն անցած պահուն , մշուշը այնքան խիստ էր որ , ան չկրցաւ տեսնել թէ իր մեքենան շատ ցածէն կ'երթար , կառչեցաւ ծառի մը ու մահամերձ վիճակի մը մէջ գործլ քին հետ տարածուեցաւ գետինը ու քանի մը ժամ վերջ իր հոգին աւանդեց հիւանդանոցի մը մէջ : Նմանը չրտեսնուած պատիւներ տելի ունեցան անոր յուղարկաւորութեան օրը : Ծովէն անցնելով գետի մէջ խեղդուիլ կ'ըսէ , առակ մը , որուն ապացոյցը մեր աչքերուն առջև իսկ տուաւ նոյնինքն Պլէրիօ , որ Մանչի ծովը անցնելէն վերջ , եկաւ ինկաւ թագսիմի . . . աղբանոցներուն մէջ :

\* Սթիթի Ռօս , ուրիշ նշանաւոր օգտնաւոր մը 650 ժամուան թռիչքով Անգլիայէն Աւստրալիա անցաւ : Ճամբան շատ մը արկածներու համդիպեցաւ , սակայն առէնահետաքրքրականը հետեւեալ երկու դիպումներն են : Հօնգօնկի մէջ անոր մեքենան ցելեւորու մէջ միլ ճուեցաւ : Հողը այնքան կակուղ էր որ կարելի չ'էր անոր վրայէն քշել իր մեքենան , որով խորհուեցաւ հողը ծածկելու համար փսիաթներ ճարել ու այս պատճառաւ խեղճ բնիկներու երկու հարիւր բնակարանի տանիքը փլցուեցաւ ու դաշտը փսիաթով ծածկուեցաւ . իրր գործաւոր բանտարկեալներ աշխատեցան : Մեքենան ճամբայ ելլելէն վերջ այդ փսիաթները սոսկալի անգղներու պէս երկար ատեն սաւառնակին ետեւէն քշուեցան , տարուեցան , մեծ զարմանք պատճառելով ներկայ . . . անհաւատներուն : Երկրորդ դիպումը մը ևս , կատաղի թռչուններ , անշուշտ իրենց հետաքրքրութենէն մղեալ ,



այնքան խճողուեցան սաւառնակին շուրջ որ, յառաջանալը անկարելի եղաւ, մանաւանդ երբ այս անգութ թռչուններէն չարածճի մը կտարեց մեքենային պտտ տակներէն մին ու այսպէս Ռոս գետին իջաւ, քիչ վերջ վիրաւոր մեքենայով ճամբան շարունակելու պայմանաւ: Այսպէս կրցաւ հասնիլ Աւստրալիա, մտեղներէ հալու մաչ:

Վերջաբան. —

Հայ Սկաուտներու և ծնողքներու լաւ օրինակ մը...

Անգլիացի տեղակալ մը «Թ.այմզ»-ի մէջ կատուի մը մասին հ'տեւեալ պատմութիւնը կ'ընէ.

... Հրգեհի պահուն այդ տան կատուն երեք անգամ հրկիզումէ ազատեցինք. սակայն ան կատալիօրէն կը նետուէր բոցերուն մէջ ու կը կորսուէր տան ներսերը: Վերջապէս իր մահը գտաւ այդ տան աւերակներուն տակ: Երբ տան տիկնոջ հարցոցի թէ՛ այդ կատուն ինչ պատճառաւ չէր ուղեր բռնուիլ այդ տունէն, «Պարոն, կատուս ձագուկներ ունէր, այնքան շատ կը սիրէր զանոնք որ նախընտրած է թերեւս անոնց հետ մեռնիլ» պատասխանեց կինը:

Հոս մայրեր կը թողուն որ իրենց զաւակները այրին մոլոր թիւններուն մէջ, ազգէս անբան մայրեր ծնողական սիրոյ օրինակներ կուտան մեզ Եւրոպական... կատուներէն այլ շատ բան ունիք սորվելիք:

ՎԱՀՐԱՄ Ս ՓԱՓՎԶԻԱՆ

ՀԱՆԳԻՄԱՆԵՐ

24 Յունուար շարաթ լեզիեր Բանդալթի սինէմայի սրահին մէջ տեղի տնեցաւ Շիշլիի Հ. Մ. Լ. Մ. Մասնաճիւղին սարքած ըտանեկան երեկոյթը: Հանդէսը լաւ կազմակերպուած էր թէև, սակայն մոզովուրդը պէտք եղածին չափ չէր քաջալերած զայն իր ներկայութիւնովը:

Երեկոյթը սկստւ Հ. Մ. Լ. Մ. ի կեդրոնի վարչութեան ներկայացուցիչին, սկաուտիզմի մասին կարճ բանախօսութիւնովը, որմէ վերջ արտասանութիւններ եղան օր. Վարդուհի Քէմ հոճեանի և Պ Պապիկեանի կողմէ, և պզտիկ ֆուհսի մը Արտեմիա Թաատեր Միութեան կողմէ:

Ասոնցմէ վերջ պարերը սկսան որ տեւեցին մինչև առտու:

17 Յունուար շարաթ օր Նոր Դպրոցի սկաուտներու երգման արարողութիւնը տեղի ունեւունեցաւ. նոյն դպրոցին մէջ, նախագահութեամբ Ս. պատրիարք հօր: Ներկայ էին ծնողքներ, մասնաւոր հրաւիրեալներ, և Հ. Մ. Լ. Մ. կեդր. վարչութեան կողմէ Պ. Պ. Գ. Յակոբեան և Հ. Ճիզմէճեան: Սկաուտները, մի առ մի իրենց երգումը կատարեցին, որմէ վերջ Ս. պատրիարքը ներկաներուն գեղեցի կերպով բացատրեց արարողութեան նպատակը և ոգին: Պ. Յ. Հինտլեան, դպրոցին տնօրէնը, որ սկիզբէն այնքան համակիր գտնուած է այս մակաւարժական նոր մէթոտին, պատմականը բրաւ սկաուտութեան մեր մէջ մուտ գտնելուն և անոր տալիք օգուտներուն: Հանդէսը փակուեցաւ և ներկայները գոհ տպաւորութեան տակ մեկնեցան:

25 Յունուար Բերայի Երոզութեան եկեղեցիին մէջ հոն բազմութեան մը ներկայութեամբ տեղի ունեցաւ Բերայի սկաուտներու երգման արարողութիւնը նախագահութեամբ Ս. պատրիարքին: Պատարագէն վերջ սկաուտները բեմին առջև, հայկական դրօշին վրայ դրուած աւետարանի և խաչի վրայ մի առ մի կատարեցին իրենց երգումը: Երգման կ'առաջնորդէր փոխ խմբագետ Պ. Արայ Տօմինեան, երգումէն վերջ ամէն մէկուն ուսին վրայ պատրիարք նայրը ինք կը կախէր ժապաւէնները, որմէ վերջ նորընձաները իրենց խմբագետ Պ. Փիրայր խորասանձեանը բարեկիցով կ'անցնէին:

Արարողութեան վերջնապուն Ս. Պատրիարքը բեմ ելաւ և խօսքը մոզովուրդին ուղղելով յուզուած շեշտով մը բազատրեց այս արարողութեան բարձրութիւնը և շեշտեց սկաուտական կազմակերպութեան կարեւորութիւնը: Քսրողը խիստ գեղեցիկ և ոգեւորիչ էր, սրբազանը շատ լաւ ու խորունկօրէն թափանցած էր պատանեկան այս նոր կազմակերպութեան ոգիին: Ինք ի յայտ բերաւ Նաե այն լայն ոգին մեր իզական սեռին և սոյն ուղղութեամբ կրթուելու մասին: Դժբաղդարաւ տեղի անձկութեան պատճառով չի պիտի կրճանք սոյն քարոզը հոս մէջ բերել, լաւ կ'ըլլար որ մեր օրաթերթերը նոյնութեամբ տային զայն ամբողջ մոզովուրդին համար:

Քարոզէն վերջ դուրսի փակին մէջ, սկաուտները տողանցք մը կատարեցին ուր ներկայ էին Նոր Դպրոցի սկաուտներն ալ, որ եկած էին իրենց եղբայր սկաուտներուն ի պատիւ, իրենց խմբագետ Պ. Արարատ Քրիսեանի առաջնորդութեամբ: Նոր երգումներու խումբը նկարուեցաւ Հ. Մ. Լ. Մ. ի լուսանկարիչ Պ. Լ. Չերազի կողմէ, իրենց կեդրոնը ունենալով Ս. Պատրիարքը: